

## ՍՈՒՐԻԱՆ ՃԱԻ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց, որ Սուրիոյ Զանրապետութիւնը ցաւ կը յայտնէ յորդանանեան օդուժին կողմէ սուրիական հողերուն վրայ իրագործուած յարձակումներուն համար: Վերջինը տեղի ունեցաւ 18 Յունուարին, թիրախ դարձնելով Սուէյտա Նահանգին հարաւային արուարձանի գիւղերը, ուր գոհեր եւ վիրաւորներ արձանագրուեցան:

Յարձակումները, ըստ յորդանանեան կողմին, տեղի ունեցան սուրիական սահմանին միջոցով Յորդանան թմրեցուցիչ նիւթեր փոխադրող խըմբաւորումներու դէմ ուղղուած ըլլալու պատրուակով:

Նախարարութիւնը յայտնեց. «Սուրիա կը շեշտէ, որ սուրիական հողերու վրայ նման ռազմական գործողութիւններու որեւէ արդարացում ընդունելի չէ, շեշտելով, որ ան պիտի ջանայ հասկացողութիւն ցուցաբերել պատահածին նկատմամբ՝ երկու երկիրներուն եղբայրական յարաբերութիւնը պահպանելու համար, սակայն վերջին ամիսներու ընթացքին տեղի ունեցած քաղաքական, տեղեկատուական եւ գիտութեամբ սաստկացումները երբեք չեն համապատասխաներ երկու երկիրներուն միացեալ յանձնարարութեան միջոցով գոյացած համաձայնութեան, յատկապէս տարբեր տեսակի խախտումներու դէմ պայքարելու գործակցութեան տրամաբանութեան»:

Շար.՝ Էջ 5 >

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ «ԿԻԼԻԿԻԱ ՎԵՐՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ»-Ը ԱԽՐՏԵՃ ԻՐ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Զայրապետին նախաձեռնութեամբ եւ նախագահութեամբ գումարուած «Կիլիկիա Վերլուծական Զարթակ»-ի երկօրեայ նիստերը (19-20 Յունուար 2024) հասան իրենց աւարտին:

Առկայ հարթակը, որ մինչ այժմ ունեցած է առցանց եօթը նիստեր, ներառած էր հայկական առումով ընդլայնուած աշխարհագրութիւն. արդարեւ, Զայաստանէն, Արցախէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, հարաւային Ամերիկայէն, Չուիցերիայէն, Ֆրանսայէն եւ Լիբանանէն պատմաբաններ, իրաւագետներ եւ քաղաքագետներ երկօրեայ նիստերով քննարկեցին «Զայական Աշխարհը եւ Տարածաշրջանային Իրադարձութիւնները» թեմային:



առնչուած իրատապ օրակարգի կէտեր:

Փրոֆ. Աշոտ Մելքոնեան (Զայաստան), փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան (Զայաստան), դոկտ. Արմէն Մարուքեան (Զայաստան), դոկտ. Վահրամ Բալայեան (Արցախ), դոկտ. Զրայր Պալեան (Ա.Մ.Ն.), դոկտ. Խաչիկ Տեր Ղուկասեան (Արժանթին), դոկտ. Վիգէն Զթըրեան (Չուիցերիա), Տիգրան Եկաւեան (Ֆրանսա), դոկտ. Նորա Պայրազտարեան (Լիբանան), Շահան Գանտաշարեան (Լիբանան) եւ Ահարոն Շիրտըմեան (Լիբանան) -

Շար.՝ Էջ 5 >

Շար.՝ Էջ 8 >

## ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱԼԵՊԻ ՂԵՍԱԽՈՐ ՀԻՊԱՏՈՍԸ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԱՅՅԵԼԵՃ ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ

Երկուշաբթի, 22 Յունուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ.



Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. առաջնորդարանէն ներս ընդունեց պաշտօնական այցելութիւնը Իրանի Իսլամական Զանրապետութեան Զալէպի գլխաւոր հիւպատոս Նաուապ Նուրիին եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան:

Զանդիպուրի ներկայ էին Նա-

եւ Զոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան, Ազգ. Վարչութեան ատենապետ մեթր Սունապուլ Սունապուլեան եւ Ազգ. Վարչութեան անդամներ:

Պատուիրակութեան անդամները շնորհաւորեցին սրբազան հայրը եւ թեմի ժողովականութիւնն ու ժողովուրդը՝ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով: Փոխգործակցութեան մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, արծարծուեցան ներկայ իրավիճակն ու ճնշող դժուարութիւնները: Անդրադարձ կատարուեցաւ Նաեւ փոխադարձ յարաբերութիւններուն:

Սրբազան հայրը ցաւակցութիւն յայտնեց պարոն հիւպատոսին, անցնող օրերուն Դամասկոսի պայ-

թումին գոհ գացած նահատակներուն համար, եւ ընդհանրապէս երկու ժողովուրդներու բոլոր նահատակներուն համար, որոնք հայրենիքի պաշտպանութեան եւ խաղա-

Շար.՝ Էջ 5 >

## «ԵՐՈՂԱՅԻՆԵՐԸ ՅԱՆՈՒՆ ԱՐՅԱՄԻ» ՀԱՐԺՈՒՄԸ ԵՐՈՂԱՅԻ ՈՂՋ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ Է ՀԱՍՏԱՆԲՈՒՄ

Ի աջակցութիւն Արցախի՝ Եւրոպական տասնչորս երկիրներու աւելի քան յիսուն քաղաքներուն մէջ տեղի կ'ունենան տարբեր միջոցառումներ, մասնաւորապէս՝ Աւստրիոյ, Պելճիքայի Պուլկար-

**27<sup>TH</sup>/28<sup>TH</sup> JANUARY 2024**  
 AUSTRIA | BELGIUM | BULGARIA | CYPRUS  
 CZECH REPUBLIC | FRANCE | GERMANY | GREECE  
 NETHERLANDS | ROMANIA | SPAIN | SWEDEN | SWITZERLAND | UK  
[www.europeansforartsakh.eu](http://www.europeansforartsakh.eu) EUROPEANS FOR ARTSAKH

Շար.՝ Էջ 8 >

## 25490 ՆԱԶՏԱԿ ԵՒ 63354 ՎԻՐԱԽՈՐ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՂՄԵ ԿԱԶՋԱՅԻ ՀՐԹԻՈՎԱԿՈՍՄԱՆ ՀԵՏԵԻՆՔՈՎ



ՍԱՆԱ-ի տուեալներով՝ Կազգայի վրայ իսրայելեան օդուժի շարունակուող յարձակման հետեւան-

Շար.՝ Էջ 5 >

## ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ. «ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԷՍԱ ՃԱՄԱՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՅՈՒՄԻՆ ԳԾՈՎ ՄԻՆՉԵՒ ԱՅԾՄ ԱՐԴԻՒՆԵ ԶԿԱՅ»



այս պայմանաւորութիւնները մենք վերահաստատած ենք նախարար Ֆիտանի հետ 23 Դեկտեմբերին Թեհրանի

ԶՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան մամլոյ ասուլիսի ընթացքին ըսած է, որ Թեհրանի մէջ Զայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Զաքան Ֆիտան վերահաստատած են Զայաստան-Թուրքիա սահմանի՝ երրորդ երկիրներու քաղաքացիներուն եւ դիւանագիտական անձնագիր կրողներուն համար բանալու պայմանաւորութեան թիւնը, սակայն այս գծով մինչեւ այսօր արդիւնք չկայ:

«Քննարկուած առարկայ եղած է եւ համաձայնութիւն ձեռք բերուած է այն մասին, որ ցամաքային սահմանը բացուի երրորդ երկիրներու քաղաքացիներուն համար եւ Զայաստանի ու Թուրքիոյ այն քաղաքացիներուն համար, որոնք ունին դիւանագիտական անձնագիրեր: Նաեւ այս պայմանաւորութիւնները մենք վերահաստատած ենք նախարար Ֆիտանի հետ 23 Դեկտեմբերին Թեհրանի

Շար.՝ Էջ 5 >



### Խմբագրական

## ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԴ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՄԸ ՉԷ

Մարդու իրավունքները հասկանալի են սոսկ մասնագետներու, ուսուցիչներու, վարչական պատասխանատուներու, մամուլի ծառայողներու ամբողջությունը չէ: Մարդու իրավունքները այն պաշարն է, որ կը նպաստէ համայնքի կրթական, մշակութային, ազգային, հոգեւոր, գրական, մամուլի եւ դաստիարակչական մարզերուն, դերակատարութիւն կ'ունենայ համայնքի կեանքի ոչ միայն պահպանման, այլեւ զարգացման մէջ:

Վերջին տարիներուն, յատկապէս պատերազմի ու տնտեսական տագնապի դժուարութիւններուն մէջ յայտնուող համայնքները մարդու իրավունքներու նկատմամբ կորուստ ունեցան՝ արտագաղթին եւ սերունդներուն միջեւ ստեղծուած բացին հետեւանքով: Այդ բացը յառաջացաւ այն տարիներուն, երբ պատրաստուած կամ գէթ որոշ փորձառութիւն ձեռք ձգած նկատմամբ թիւով մասնագետներ, վաստակաւոր ազգայիններ, ուսուցիչներ եւ այլք գաղթեցին, իսկ անոնց յաջորդող սերունդը տակաւին անհրաժեշտ փորձառութիւնը, պատրաստուածութիւնն ու մասնագիտական ուսումը չէր ամբողջացուցած՝ փոխարինելու գիրեւք:

Բնականաբար գոյութիւն ունեն եւ տակաւին ունին սակաւաթիւ անհատներ, որոնք գաղթականի ցուպը ձեռք չառին ու շարունակեցին գործել համայնքէն ներս: Այսպիսիներուն ուսին բարդուեցաւ առաւելաբար տարուող աշխատանքներու որչ քան մինչեւ նորերու պատրաստութիւնը:

Մարդու իրավունքները պատրաստութիւնը այնքան ալ բարդ գործընթաց մը չէ սակայն, որովհետեւ համայնքը ունի երիտասարդներու պայծառ սերունդ մը, որ պատրաստ է ստանձնելու իրեն համապատասխան աշխատանք, եթէ զինուի անհրաժեշտ գիտելիքներով, փորձառութեամբ, գնահատուի պատշաճօրէն ու առիթ գտնէ գործելու իր նախասիրած ոլորտներուն մէջ:

Մարդու իրավունքները պատրաստութեան աշխատանքը կազմակերպողները պիտի ըլլան առաւելաբար իւրաքանչիւր ոլորտի պատասխանատու մարմինները, որոնց աշխատանքի եղանակէն կախեալ պիտի ըլլայ գործընթացի արդիւնաւետութիւնը:

Այս ժամանակաշրջանին անհրաժեշտ է բոլոր ոլորտներուն մէջ երիտասարդներուն կողքին ներգրաւել երեցները, յատկապէս փորձառութիւն ունեցողները, որոնց միջոցով կարելի պիտի ըլլայ ոչ միայն փորձառութեան, այլեւ տեղեկութիւններու փոխանցումը նորերուն, որպէսզի աշխատողը ըլլայ իրազեկուած, ըմբռնէ իրեն վստահուած աշխատանքին տարողութիւնն ու լրջութիւնը եւ այդ աշխատանքը պահէ նոյն որակին մէջ:

Ուսուցչական ասպարեզէն ներս, գործիքակ, կարելի է կիրարկել օգնական ուսուցիչի դրութիւնը, որպէսզի երիտասարդ օգնական ուսուցիչը, աստիճանաբար ծանօթանալով տարուող աշխատանքին, փորձառութիւն ձեռք բերէ ու պատրաստուի կարճ ժամանակ ետք ստանձնելու ուսուցչութեան նուիրական առաքելութիւնը: Նոյնն է պարագան միութեանական աշխատանքներուն: Անհրաժեշտ է ընտրուող իւրաքանչիւր մարմնի մէջ երիտասարդներուն կողքին ներառել փորձառուներու տոկոս մը, որպէսզի փոխանցուի փորձառութիւնն ու գիտելիքը:

Հաստատութիւններու վարչական աշխատանքներուն մէջ եւս կարելի է ներգրաւել օժանդակներ, անոնց համար սահմանելով աշխատանքի որոշակի ժամեր, ու նախապատրաստել գիրեւք աստիճանաբար, ի հարկին անհրաժեշտ դասընթացներու մասնակից դարձնելով:

Մարդու իրավունքները պատրաստութիւնը ամէն բանէ առաջ ընթացք կ'առնէ համայնքի կարելիութիւններու եւ մարդկային պաշարի ամբողջական ուսումնասիրութիւնն ու արժեւորումը կատարելով, աշխատանքի դաշտ ներգրաւելով առաւելագոյն որակն ու թիւը:

Այնուհետեւ քայլ առ քայլ կարելի պիտի դառնայ բաց մնացած օղակները ամբողջացնել ու համայնքի վերակազմակերպման շղթան լիարժեքօրէն կազմաւորել, առանց արհամարհելու կամ թերազնահատելու առկայ մարդկային պաշարին դերակատարութիւնը:

«Գ.»

-Սուրիոյ շուրջ Ասթանայի 21-րդ միջազգային ժողովին մասնակցող Սուրիոյ պատուիրակութիւնը Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Պասսամ Սապպադի նախագահութեամբ հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ մէջ Ռուսիոյ նախագահի յատուկ բանագնաց Ալեքսանտր Լաւրենթեւի նախագահութեամբ ռուսական պատուիրակութեան հետ:



Ասթանայի մէջ տեղի ունեցած հանդիպումին ընթացքին, պատուիրակութիւնները խորհրդակցեցան միջազգային ժողովի օրակարգին եւ ներկայացուած նիւթերուն գծով միասնական կեցուածքի որդեգրման շուրջ:

Ժողովին կը մասնակցին Սուրիոյ Հանրապետութեան պատուիրակութիւնը եւ Ասթանայի ժողովին հովանաւոր կողմերը՝ Ռուսիա, Իրան եւ Թուրքիա:

-Տեղական աղբիւրներ յայտնեցին, որ Իտլիպի արուարձաններուն մէջ գործող սուրիական բանակի միաւորներ երկուշաբթի, 22 Յունուար 2024-ի

առաւօտեան ծակը հրետակով եւ հրթիռներով հարուածներ հասցուցին ահաբեկչական խմբաւորումներու դիրքերուն Ճեպէլ Չաուիէի Ֆթիւա, Սեֆաուիէն, Քանսաֆրա եւ Տէր Սուսպուլ գիւղերու շրջանաջրը:



Աղբիւրները աւելցնելով ըսին, որ «Նուսրա»-ի հովանաւորութիւնը վայելող «Ալ-Ֆաթի ալ-Մուպիս»-ի գործողութիւններ կոչեցեալ ահաբեկչական խմբաւորումներ նախորդ կեսգիշերին կրակած էին Իտլիպի հարաւային արուարձաններու սուրիական զինուորական դիրքերու ուղղութեամբ, որուն հետեւանքով երկու զինուոր նահատակուած էր: Սուրիական բանակի միաւորներ հակադարձելով հրթիռակոծած են ահաբեկիչներու դիրքերը՝ մեծ վնասներ հասցնելով անոնց շարքերուն:

- Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց 2024-ի «5» եւ «6» թուակիր օրէնսդրական հրամանագրերը:

2024-ի «5» թուակիր հրամանագրին համաձայն, կ'արգիլուի սուրիական լիւրայէն բացի այլ դրամ օգտագործելը առեւտրական փոխանակումներուն մէջ: Հրամանագիրը խախտողներուն պատիժը պիտի ըլլայ բանտարկութիւն, սակայն անոնց առիթ պիտի ընծայուի դատական մարմիններու ներկայութեան իրենց իրավիճակը կարգաւորելու, որպէսզի երկարատեւ բանտարկութեան պատիժէն զերծ մնան, նկատի ունենալով, որ բանտարկութեան պատիժը կրնայ աւելի քան 7 տարի տեւել:



Իսկ 2024-ի «6» թուակիր հրամանագրին համաձայն, պատիժի կ'ենթարկուին առանց արտօսութեան լուծարանի փոխման գործով զբաղողները, ինչպէս նաեւ անոնք, որոնք առանց արտօսութեան օտար դրամանիշով գումար կը փոխադրեն Սուրիայէն դուրս: Հրամանագիրը խախտողները ժամանակաւոր բանտարկութեան պիտի ենթարկուին, 5-էն 15 տարուան տեւողութեամբ, եւ գրաւուած գումարին եռապատիկին արժեքով տուգանք պիտի վճարեն, նուազագոյնը՝ 25 միլիոն ս.ո.:

Հրամանագիրը չի ներառեր արտաքին առեւտուրի օրինական մարզը:

- Կիրակի, 21 Յունուար 2024-ին, Սուրիոյ Պետական Համալսարաններէն ներս ընթացք առին 2023-2024 համալսարանական տարեշրջանի առաջին կիսամեակի քննութիւնները:



Քննութիւնները պիտի շարունակուին շուրջ 1 ամսուան տեւողութեան:

-Շաբաթ, 20 Յունուարին, Իսրայէլ օդային յարձակումով մը հրթիռակոծեց Դամասկոսի Մազէ Թաղամասին մէջ բնակարանային շէնք մը:



Յարձակումին հետեւանքով նահատակներ արձանագրուեցան, որոնց կարգին էին իրանցի խորհրդատուներ:



# Լուրեր Հայաշխարհին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ. «ՊԱՔՈՒԻ ԴԻՔՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՅԵՏԵՆԹԱՅ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ»

Երեւան եւ Պաքու յաջողեցան փոխադարձ համաձայնութեան հասնիլ խաղաղութեան պայմանագիրի բնաբանի որոշ ձեւակերպումներուն շուրջ:



Բայց գոյութիւն ունին շարք մը առանցքային հարցեր, որոնց վերաբերեալ մօտեցումներու տարբերութիւն կայ: Այս մասին, 23 Յունուարին լրագրողներու հետ հանդիպման ընթացքին յայտարարած է Հայաստանի արտաքին գործոց նախարար (Այսուհետեւ՝ ԱԳՆ) Արարատ Միրզոյեան:

«Նախապէս ատրպէյճանական կողմը կ'առաջարկէր օգտագործել

1974-էն 1990 թուականներու ժամանակաշրջանի քարտէզները: Մենք առաջարկեցինք, որ ատիկա կրնայ ընդունելի ըլլալ: Բայց, մեկնելով Ատրպէյճանի նախագահի վերջին յայտարարութիւններէն, կարելի է ըսել, որ Ատրպէյճանի դիրքորոշման մէջ այս հարցին մէջ յետընթաց կայ», ընդգծեց Հայաստանի ԱԳՆ ղեկավարը:

## ՄՈՒԲԱՏ ՓԱՓԱՉԵԱՆԻ ԵՒ ՄԱՍԻՍ ԱՐՐԱՀԱՄԵԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐԳԵԼՔԸ ԿԸ ՎԵՐԱՅՈՒԻ

ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինի հանրային կապերու գրասենեակի պատասխանատու, Հայաստանի Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Զրիստիւն Վարդանեան կը հաղորդէ, որ 22 Յունուարին Հայաստանի Վարչական դատարանը բաւարարած է ՀՀ-ի Բիւրոյի անդամ, Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող Խորհուրդի համանախագահ Մուրատ Փափազեանի եւ ՀՀ-ի Հոլանտայի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Մասիս Արրահամեանի դատական հայցերը ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութեան՝ պարտաւորեցնելով Ազգային անվտանգութեան ծառայութիւնը Մուրատ Փափազեանի եւ Մասիս Արրահամեանի վերաբերեալ տուեալները հանել Հայաստանի Հանրապետութեան տարածքին մէջ անցանկալի նկատուող օտարերկրացիներու տուեալներու շտեմարանէն:



Վարդանեան նաեւ կը տեղեկացնէ, որ նկատի ունենալով հարցին հանրային լայն հնչեղութիւնը եւ համակարգային բնոյթը, այլ մանրամասնութիւններ ներկայացնելու համար 25 Յունուարին, ժամը 12:00-ին, ՀՀ-ի «Սիմոն Վրացեան» կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ մամուլի ասուլիս՝ գործով ներգրաւուած փաստաբաններ Սիրանոյշ Սահակեանի, Ռուբէն Մելիքեանի եւ Ազգային ժողովի պատգամաւոր Արծուիկ Միւսաբեանի մասնակցութեամբ:

## ԵՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՍԱՀՄԱՆՓՈՒԿԵ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔ ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՄՈՒՏՔԸ ԱՐԳԻԼԱԾ ԸԼԼԱՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը (ԵԽԽՎ) նախատեսած է սահմանափակել Ատրպէյճանի պատուիրակութեան լիազօրութիւնները՝ երկրի կողմէն կազմակերպութեան սկզբունքները խախտելուն համար: Այս մասին Սթրասպուրկի մէջ ռուսական թերթի մը թղթակիցին յայտնած է նման քայլի նախապատրաստման ծանօթ քանի մը աղբիւրներ:



ԵԽԽՎ նախագահական յանձնաժողովի մակարդակով արդէն իսկ տեղի ունեցած է Ատրպէյճանի համար սահմանափակումներ նախաձեռնելու հիմնարար որոշում: Կեսօրին՝ լիազումար նիստին մեկնարկով, պատգամաւորները պաշտօնապէս կը սկսին այս ընթացակարգը՝ ամենայն հաւանականութեամբ Գերմանիոյ ներկայացուցիչի պաշտօնական նախաձեռնութեամբ:

Երկրին դէմ պաշտօնական բողոքը այն է, որ Փետրուարին կայանալիք Ատրպէյճանի նախագահական ընտրութիւններուն ԵԽԽՎ դիտորդներ չեն հրաւիրուած: Բողոք կայ նաեւ առ այն, որ Ատրպէյճան հրաժարած է ԵԽԽՎ գեկուցողներուն թոյլ տալ մուտք գործել բռնագրաւուած Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհ՝ Լաչինի միջանցք:

Թէ որոշակի ինչ քայլեր կը նախատեսու ձեռնարկել ԵԽԽՎ-ն, տակաւին յայտնի չէ, որոշումը պէտք է գոյացնէ վեհաժողովը:

## ՔԱՆԱՏԱՆ ԿՐՆԱՅ ՎԵՐԱՅՆԵԼ ԹՈՒՐԵՒՈՅ ՆԿԱՏԱՄԲ ԿԻՐԱՌՈՒՂ ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԳԵԼՔԸ

ՀՀ-ի Հայ Դատի Զանաւառայի յանձնախումբին մօտ լուրջ մտահոգութիւն առկայ է առ այն, որ Զանաւառ կրնայ չեղարկել Թուրքիոյ նկատմամբ սահմանուած՝ ռազմական արտադրանքի վաճառքի արգելքը: Այս քայլը կրնայ ձեռնարկուիլ Շուտի՝ ՆԱԹՕ-ին անդամացնելու գործարքին շրջագիծէն ներս:

Թուրքիոյ նկատմամբ կիրարկուող զենքի վաճառքի արգելքին վերացումը յատկապէս վտանգաւոր է քանաւառաքական գիւտորական առեւտուրի վերջին ցնցող բացայայտումներէն ետք, երբ 2019-ին պաշտօնական Օթթաւուան թոյլատրած էր անօդաչուներու պատրաստութեան մէջ կիրարկուող L3Harris/WESCAM արտադրութեան վաճառքը Անգարային, ինչ որ կը հանդիսանար «Պայրակթար» անօդաչուներու մրցուակութիւնը ապահովող առանցքային մանրամասնութիւններէն մէկը:



Հետագայ հետաքննութիւնը ապացուցած էր այդ ճարտարարուեստի փոխանցումը Ատրպէյճանին, ինչ որ արգիլուած էր: Բացայայտուած էին թրքական այլ գեղծարարութիւններ եւ: Մասնաւորապէս, քանաւառական ճարտարագիտութիւնը, համապատասխան թրքական դիմումին, ենթակայ էր կիրարկման ոչ թէ յարձակողական, այլ հետախուզական անօդաչուներու համար:

Պետական այս հետաքննութիւնէն ետք, քանաւառական կողմը, Հայ Դատի Զանաւառայի յանձնախումբի աշխատանքներուն հետեւանքով, Թուրքիոյ նկատմամբ կիրարկեց գիւտորական արտադրանքի վաճառքի արգելքը:


ՀՀ-ի Հայ Դատի Զանաւառայի Յանձնախումբի դիրքորոշմամբ՝ Զանաւառան պէտք չէ մեղսակից դառնայ թուրք-ատրպէյճանական գիւտորական յանցագործութիւններուն՝ նպաստելով անոնց ռազմական գիւտորակներու ընդլայնումին: Խարդախ մտադրութիւններ ունեցող պետութիւններուն զենքի վաճառքը կը խախտէ Զանաւառայի զենքի արտահանման կանոնները՝ զգալի վտանգ ներկայացնելով տարածաշրջանային կայունութեան: Տարածաշրջանային խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանման եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան վերաբերեալ Զանաւառայի յայտարարած առաջնահերթութիւններուն համահունչ՝ Օթթաւուան պէտք չէ չեղարկէ զենքի վաճառքի արգելքը:

Նկատի առնելով թրքական նախկին գեղծարարութիւններն ու զենքի ձեռքբերման կանոններու խախտումները, ինչպէս նաեւ Թուրքիոյ կողմէ ՀՀ տարածքային ամբողջականութեան ու ինքնիշխանութեան հանդէպ սպառնալիքները՝ Հայ Դատի Յանձնախումբը Զանաւառայի կառավարութեան կոչ կ'ուղղէ ցուցաբերել առաւելագոյն զգուշութիւն եւ առաջնահերթութիւն տալ տարածաշրջանային կայունութեան, խաղաղութեան եւ մարդու իրաւունքներուն:

ՀՀ-ի Բիւրոյի Հայ Դատի կեդրոնական գրասենեակ 23 Յունուար 2024

## ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՉԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՍՏԵՂՈՒԱԾ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արցախի ժողովուրդին հաւաքական հայրենադարձութեան եւ հիմնարար այլ իրաւունքներու պաշտպանութեան նպատակին կոչուած Յանձնախումբը արդէն ձեւաւորուած է: Այս մասին Facebook-ի իր էջին վրայ գրած է ԱՀ ՄԻՊ Գեղամ Ստեփանեան:



Յանձնախումբի անդամներուն առաջարկով յանձնախումբի աշխատանքներուն համակարգումը պիտի իրականացնէ ՀՀ արտաքին գործոց նախկին նախարար Վարդան Օսկանեան:

Գործունեութեան մեկնարկին, Յանձնախումբի անդամներուն եւ այլ մանրամասնութիւններուն մասին լրացուցիչ տեղեկութիւններ պիտի տրուին յառաջիկայ օրերուն:

Կ'ակնկալենք, որ արցախցիներու հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան բնագաւառին մէջ գործունեութիւն ծաւալող անհատները, խումբերն ու հաստատութիւնները համագործակցին համապատասխան լիազօրութիւն ստացած այս Յանձնախումբին հետ:



## Ակնարկ

### ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՊՂՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԱԴՐՈՂ

Տաւոսի Համաշխարհային տընտեսական ֆորումի ամենամեայ հանդիպման ընթացքին Քաթարի վարչապետը յայտարարած է, որ հուսիներու վրայ ամերիկեան եւ բրիտանական յարձակումները կրնան միայն վատթարացնել Կարմիր ծովուն մէջ անվտանգութեան իրավիճակը, եւ որ այնտեղ անվտանգութեան խընդիրներու իրական լուծումը իսրայէլական յարձակումներու դադարեցումն է Կազգայի մէջ:

Ըստ անոր, Արեւմուտքի ռազմական միջամտութիւնը վերջ չի դնէր հուսիներու յարձակումներուն եւ չի գաւթը գանձը: Ընդհակառակը, միայն կ'ուժեղացնէ յարձակումները: Իսկ լուծումը՝ Կազգայի հակամարտութեան լիցքաթափումն է:

Այս յայտարարութեամբ պարզ կը դառնայ, որ հուսիներու յարձակումները Կարմիր ծովու ռազմավարական անցքերուն ուղղութեամբ պիտի շարունակուին, ոչ իբրեւ հակադարձակում ամերիկեան եւ բրիտանական հարուածներուն, այլ մինչեւ Կազգայի խնդիրի հանգուցալուծում:

Փաստօրէն Միացեալ Նահանգներու նախագահը եւս կը յայտնէր, որ ամերիկեան յարձակումները հուսիներուն վրայ հիմնական ազդեցութիւն պիտի չունենան: Իր համոզումով՝ հուսիները պիտի շարունակեն արգելակել նաւային երթուիւնները:

Տրուած ըլլալով, որ այդ հանգուցալուծման պահը տակաւին տեսանելի չէ, հետեւաբար Կարմիր ծովու ռազմական իրադարձութիւնները պիտի շարունակուին: Բնականաբար հուսիական յարձակումները պիտի հակադարձուին ամերիկա-բրիտանական ուժերուն կողմէ, Կարմիր ծովու այդ հատուածը թե՛ պահելով կամ Նոյնիսկ պատերազմական գօտիի վերածելով: Այդ անցքի անկայունութիւնը ամենէն շատ կը հարուածէ Իսրայէլը, որուն համար կարեւոր կենսաճանապարհ կը շարունակէ մնալ Կարմիր ծովը:

Պաշտօնական Տոհայի հանգամանքը կարեւոր է: Քաթարը ոչ միայն տնտեսական ցանցակետ է, այլ նաեւ աշխարհաքաղաքական ուժերու ռազմայենակետեր տրամադրած երկիր, որուն շնորհուած է գործընթացներուն միջնորդելու, որոշումներ երաշխաւորելու կարգավիճակ: Թե՛ Իրանի եւ թե՛ Մեծ Եւրոպական Արաբիոյ եւ Արաբական ծոցի երկիրներու հետ համագործակցող թե՛ Անգարայի հետ սերտ յարաբերութիւններ մշակող եւ թե՛ Իսրայէլի հետ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատած միաժամանակ՝ Համասի ղեկավարութեան նստավայր յատկացուցած եւ Համասը ֆինանսաւորող երկիր:

Քաթարի վարչապետը չի պարզաբաներ, թե՛ ինչպէ՛ս պիտի ըլլայ

Կազգայի հակամարտութեան հանգուցալուծումը: Այդ պատկերացումի ընդհանուր բանաձեւը կը հրապարակէ Մեծ Եւրոպական Արաբիան. փաստօրէն պաշտօնական Ռիատը յայտարարած է, որ Ռիատ-Թել Աւի



դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը պայմանաւորուած է պաղեստինեան պետութեան կայացումով:

Պաղեստինեան պետութիւնը իբրեւ օրակարգ կ'արժարժուի նաեւ Արեւմուտքի մէջ: Այս մասին կը թուի, որ կ'առաքայախայ միջազգային օրակարգ, որուն նախապատրաստական աշխատանքներուն մէջ է Եւրոպական Միութիւնը:

Եւրոպական Միութեան տասը կէտերէ բաղկացած ծրագիրը կը նախանշէ քանի մը քայլ, որոնք կարող են ի վերջոյ խաղաղութիւն բերել Կազգայի հատուածին, ստեղծել անկախ Պաղեստինի պետութիւնը, կարգաւորել յարաբերութիւնները Իսրայէլի եւ արաբական աշխարհի միջեւ եւ երաշխաւորել երկարաժամկետ անվտանգութիւն տարածաշրջանին մէջ:

Հոս եւս զուգահեռ են Կազգայի հակամարտութեան լուծումը, Պաղեստինի պետութեան ստեղծումը, որով ալ պայմանաւորուած է տարածաշրջանի խաղաղութիւնն ու կայունութիւնը: Իսկ այդ կայունութեան համար կը հասկցուի, որ օրակարգի վրայ կու գան տարածաշրջանի երկիրներ-Իսրայէլ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը: Այլ խօսքով՝ Մեծ Եւրոպական Արաբիոյ առաջ քաշած բանաձեւը, որ առաջադրուած է նաեւ Տաւոսի մէջ:

Այս խորապատկերին վրայ Իրանը կը յայտարարէ, որ պատրաստ է յանել թափ տալու Եւրոպական Միութեան հետ իր համագործակցութեան, առընթեր հարուածելով փաքիստանեան յենակետեր: Իսրայէլն ալ իր կարգին կը հարուածէ Համասկոսի մէջ իրանեան յենակետեր եւ հարաւային Լիբանանի մէջ թիրախային գործողութիւններ կը սաստկացնէ իրանամետ կազմակերպութեան ղեկավարներու դէմ:

Թել Աւիւի շահերէն չեն բխիր Կարմիր ծովու ռազմական բախումները: Չեն բխիր նաեւ Քաթարի, Մեծ Եւրոպական Արաբիոյ ներկայացուցիչներուն յայտարարութիւնները. եւ՝ Եւրոպական Միութեան 10 կէտնոց ծրագիրը:

«Ազդակ»

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ. ՄԵԿՆԱՐԿԱԾ Է «ՊՈՒՐԱԿ» ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՀԱՐԹԱԿԸ


Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանը Նոր Նախաձեռնութեամբ հանդես եկած է՝ փոքրիկներուն համար ստեղծելով հարթակ, որ կարելիութիւն պիտի տայ անոնց զարգացնելու արեւմտահայերէն բառապաշարն ու լեզուամտածողութիւնը: Ստորեւ կը ներկայացնենք ճեմարանի տնօրէնութեան հաղորդագրութիւնը:

«Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի տնօրէնութիւնը ուրախութեամբ կը յայտարարէ 7-10 տարեկան երեխաներուն համար արեւմտահայերէնով պատրաստուած գիտելիքներու եւ նիւթերու շտեմարան՝ «Պուրակ» հարթակի մեկնարկը:

«Պուրակ»-ը ծնունդ առած է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հայկական համայնքներու բաժանմունքի հովանաւորութեամբ:

Ծրագրի նպատակն է զարկ տալ արեւմտահայերէնի բառամթերքի ու լեզուամտածողութեան զարգացման եւ տարբերակել արեւմտահայերէնով դասաւանդուող նիւթերու մատուցման եղանակները՝ նաեւ արմատացնելով արեւմտահայերէնի կենսունակութիւնը:

Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի մանկավարժական սկզբունքներուն հիման վրայ, աշակերտները տարրական եւ նախակրթարան բաժիններու առաջին տարիներուն, հիմնական բոլոր նիւթերը պիտի ստանան իրենց մայրենի լեզուով՝ հայերէնով: Հետեւաբար, տարբեր կարողութիւններով օժտուած եւ ներկայ արհեստագիտացած առօրեային մէջ ապրող հայ երեխային համար նման ծրագրի իրագործումը պիտի նպաստէ, որ լատիներէն արդի եւ ժամանակակից միջոցներով պատրաստուած «Պուրակ»-ը երեխային ընծայէ արեւմտահայերէնով յանելեալ ընդհանուր զարգացում: Անկախ կ'ընդգրկէ հայ լեզուի, պատմութեան, աշխարհագրութեան, մշակոյթի, թուաբանութեան եւ գիտութեան ոլորտները:



«Պուրակ»-ը հարթակ է, ուր գիտելիքներու եւ նիւթերու ներկայացումը կը կատարուի կարճ տեսերիկներու (short animated movies) եւ համապատասխան տպուող թերթիկներու (printable documents) միջոցով: «Պուրակ»-ին համար պատրաստուած տեսերիկները, աստիճանաբար բարդացող վարժութիւններու եւ օժանդակ թերթիկները կ'ապահովեն նիւթերու եւ մտայնացումներու լատիներէնով միջոցներով փոխանցումը եւ արմատաբանական զարգացումը՝ նպաստելով երեխայի ընդհանուր զարգացման:

«Պուրակ»-ի աշխատակազմը բաղկացած է Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի անձնակազմից, ճեմարանի տնօրէնութեան անմիջական հսկողութեամբ: Աշխատանքը բաժնուած է երկու գլխաւոր բաժիններու՝ մանկավարժական եւ «ճարտարագիտական»: Իւրաքանչիւր բաժին ունի իր պատասխանատուն եւ համապատասխան աշխատակիցներու խմբակը:

«Պուրակ»-ի բոլոր աշխատակիցները մեծ խանդավառութեամբ իրենց մասնակցութիւնը բերին այս ծրագրին՝ հաւատալով անոր նպատակին: Աշխատանքի ընթացքին յաճախ ստացանք ստեղծագործական Նոր առաջարկներ, յառաջիկային անոնք կ'իրաւանելու համար:

«Պուրակ»-ի բոլոր աշխատակիցները կը հաւատան, որ ուսուցիչներուն, աշակերտներուն կամ ծնողներուն համար, նմանօրինակ հարթակները եւ տարբեր գրաւիչ ու ստեղծագործական Նորարարութիւնները անհրաժեշտութիւն են հայ երեխաներու համար դպրոցի կամ ժամանցի պահուն:

Այժմ կը յայտարարենք «Պուրակ»-ի մեկնարկը Bourag.com հասցեով: Տեսերիկներու եւ թերթիկներու առաջին բաժինը արդէն իսկ գտնուած է հարթակին վրայ: Հարթակը կը սկսի 11 տեսերիկով եւ 22 տպագիր թերթիկներով: Հարթակը շաբաթական կը թարմացուի Նորարարութիւններով՝ նոր տեսերիկներով եւ տպագիր թերթիկներով: Յուսանք, որ կարելի պիտի ըլլայ «Պուրակ»-ը յարատեւ ճոխացնել Նորանոր հատուածներով, բացառութիւններով, տեսերիկներով:

Վարձքը կատար այսպիսի նախաձեռնութիւնները քաջալերողներուն եւ հովանաւորողներուն: Իբրեւ հայ մանկավարժներ եւ մասնագետներ՝ մեր առաքելութիւնն է վառ պահել հայերէն լեզուն ու զարկ տալ անոր զարգացման:

## ԱԼԻԵՒ ԳՈՑԱԲԱՆԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ՀՆՁԵՑՈՒՑԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՑԷԻՆ 2,5 ԺԱՄ ՏԵԻՄԾ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻ ԸՆԹԱՑՔԻՆ



Յարութ Սասունեան

10 Յունուար 2024-ին, Պաքուի բռնակալ Իլիամ Ալիև 2,5 ժամ տեւողութեամբ մամլոյ ասուլիս տուաւ ատրպէյճանցի լրագրողներուն եւ այդ ընթացքին ոչ միայն իր հերթական տուտերը օդը նետեց, այլեւ սպառնաց Նոյնիքն Յայաստանի գոյութեան: Ահա՛ 2020 եւ 2023 թուականներու արցախեան պատերազմներու ընթացքին ռազմական յաղթանակներով ոգեւորուած Ալիևի չափազանց ամբարտաւան եւ ահագանգող խօսքերու ուշագրաւ կէտերը:

Սկսինք անկէ, որ Ալիև յայտարարեց՝ «այսօրուան Ատրպէյճանը, բառիս բուն իմաստով, աշխարհի ամենաուժեղ երկիրներէն մէկն է»: Սուտ է: Ըստ [globalfirepower.com](http://globalfirepower.com) կայքի՝ 2024 թուականի դրութեամբ, Ատրպէյճանի զինուժը աշխարհի մէջ կը գրաւէ 59-րդ դիրքը: Ասիկա շատ հեռու է աշխարհի ամենաուժեղ երկիրներէն մէկը ըլլալէն: Եթէ 2020-ի արցախեան պատերազմի ժամանակ չըլլային թուրք հրամանատարներու կողմէ ատրպէյճանական զինուժի անմիջական վերահիւսկողութիւնը եւ Սուրիայէն բերուած վարձկան ահաբեկիչները, Ատրպէյճան չէր կրնար յաղթել Արցախին: Ալիև իր ասուլիսի ընթացքին խոստովանեցաւ, որ 2020-ի պատերազմին Ատրպէյճան վայելած է Թուրքիոյ ամբողջական աջակցութիւնը:



Ալիև արդարացուց Ատրպէյճանի կողմէ մարդկային իրաւունքներու լուրջ խախտումները, Նոյնիքն արցախահայութեան ցեղասպանութիւնը՝ ըսելով. «Ես բազմիցս ըսած եմ, որ միջազգային իրաւունքը չի գործեր: Այդ մեքանիզմները կը կիրարկուին միայն աւելի թոյլ երկիրներու համար: Խոշոր պետութիւնները կ'անտեսեն զանոնք: Իրենց համար օրէնքը օրէնք չէ, միջազգային իրաւունքը օրէնք չէ: Նման պայմաններու մէջ, այն երկիրները, որոնք արդարութիւն կը պահանջեն, եւ արդարացիօրէն այդպէս է, պէտք է որ իրենք ապահովեն այդ արդարութիւնը»:

Ալիև խոստովանեցաւ այն դժուարութիւնները, որոնք բախած են Ատրպէյճանի զինուժը 2020-ի պատերազմին. «Եթէ պատերազմը շարունակուեր (10 Նոյեմբեր 2020-էն ետք), շատ դժուար կ'ըլլար ազատագրել Քելբաջարի եւ Լաչինի շրջանները, յատկապէս ծմբակ եղանակին: Այսուամենայնիւ, մենք այդ ալ կ'ընէինք, բայց մեր կորուստները կրնային չափազանց մեծ ըլլալ, Նոյնիքն աւելին, քան 44-օրեայ պատերազմի ընթացքին ինկածները: Մենք բոլորս այս մէկը լաւ գիտէինք, որովհետեւ Նոյնիքն հիմա որեւէ մէկը, որ կ'այցելէ այդ շրջանները, կրնայ տեսնել, թէ որքան դժուարանցանելի է այդ հողատարածքը: Սակայն, եթէ Յայաստան չստորագրէր անձնատուութեան համաձայնագիրը, մենք պատերազմը պիտի շարունակէինք մինչեւ վերջ»:

Ալիևի յաջորդ տուտը այն է, որ 2020-ի պատերազմէն ետք Յայաստան «ապօրինի գէնք, զինամթերք, ականներ եւ կենդանի ուժ կը տեղափոխէր Ղարաբաղ»: Նման բան երբեք տեղի չէ ունեցած: Ալիև այդ օգտագործած է իբրեւ պատրուակ՝ Արցախի վրայ յարձակելու համար:

Ատրպէյճանի նախագահը բացայայտեց, որ 19 Սեպտեմբեր 2023-ին, Արցախի վրայ ատրպէյճանական յարձակումէն առաջ, «տեղւոյն հայերէն ոմանք կապուած են մեր ներկայացուցիչներուն հետ եւ առաջարկներ ըրած շփումներու մասին, եւ մենք չենք մերժած»: Թշնամիին հետ գաղտնի կապ հաստատած որեւէ հայ պէտք է դաւաճան նկատուի:

Այնուհետեւ Ալիև կարեւոր այլ խոստովանութիւն մը ըրաւ: Ան ըսաւ, որ 19 Սեպտեմբեր 2023-ին, Արցախի վրայ յարձակման ժամանակ «եթէ անոնք (արցախահայերը) չյանձնուէին՝ կ'ոչնչացուէին: Այլ տարբերակ չկար»: Ալիև այսպիսով կը հաստատէ, որ Արցախի ղեկավարներուն այլ ելք չէր մնացած, քան յանձնուիլը՝ 120 հազար արցախահայերու կեանքը փրկելու համար:

Ալիև հաստատեց, որ ծրագրած էր Արցախի ղեկավարներու ձերբակալութիւնը, որոնք այժմ կը գտնուին Պաքուի բանտը. «մեր դիրքորոշումը անջատողականներու ղեկավարներու նկատմամբ մէկ էր՝ անոնց գերեզմանները: Անոնցմէ ոմանք փորձած են փախչիլ հոնկէ՝ Լաչինի ճամբով, միւսները գտնուած են Խանքենտի մէջ (Ստեփանակերտ) եւ ուրիշ վայրեր: Մենք գիտէինք անոնց գտնուած վայրերը»: Ան աւելցուց, որ «այդ խումբէն միայն երկու մարդ բացակայ է, անոնք երեւան են»: Ալիև նկատի ուներ Ռուպերթ Բոչարեանը եւ Սերժ Սարգսեանը:

Ալիև բացայայտեց, որ անձամբ գգուշացուցած է Նիկոլ Փաշինեանը 19 Սեպտեմբեր 2023-ին Արցախի վրայ ատրպէյճանական մօտալուտ յարձակումէ. «Ես թէ՛ Յայաստանի ղեկավարութեան, թէ՛ միջազգային դերակատարներուն ըսած եմ, որ կրնամ սեղմել կոճակը եւ կատարել այդ գործողութիւնը մէկ վայրկեանի մէջ, եւ իրենք ոչինչ կրնան ընել»:

Ալիև նաեւ իր գայրոյթը արտայայտեց՝ Ֆրանսայի կողմէ Յայաստանի ցուցաբերուած աջակցութեան գծով, դատապարտեց առաջինիս գաղութային անցեալը եւ պնդեց, որ իբր թէ Փարիզ ցեղասպանութիւն իրականացուցած է 1,5 միլիոն արճեցիներու դէմ: Ան նաեւ ծաղրեց վերջերս Յայաստանի կողմէ ֆրանսական գրահափոխադրիչներու ձեռքբերումը՝ գանոնք անուանելով «թիթեղեայ տուփեր», որոնք «իրական սպառնալիք չեն մեզի համար»:

Ալիև նաեւ մերժեց Փաշինեանի վերջին նախաձեռնութիւնը՝ «Խաղաղութեան խաչմերուկը», որ կ'ենթադրէ իրարու կապել Յայաստանը, Ատրպէյճանը, Թուրքիան, Վրաստանը եւ Իրանը: Ալիև ըսաւ, որ այս միայն PR արշաւ է, որ նպատակ ունի փոխարինել իր նախընտրած «Չանգեզուրի միջանցք»-ը: Անտեսելով Յայաստանի ինքնիշխանութիւնը՝ Ալիև պնդեց, որ Յայաստան պէտք է թոյլ տայ ատրպէյճանական բռնաբար անցման՝ Ատրպէյճանէն դէպի Նախիջեւան Մեղրիով՝ առանց որեւէ ստուգման կամ մաքսագրծման: Այլապէս, գգուշացուց Ալիև, Ատրպէյճան կը շարունակէ Յայաստանի շրջափակումը:

Ատրպէյճանի նախագահը յոխորտաց, որ Յայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցուող «Խաղաղութեան պայմանագիր»-ին մէջ այլեւս որեւէ յիշատակում չկայ Ղարաբաղի մասին:

Ալիև մերժեց Փաշինեանի առաջարկը՝ Յայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ փոխադարձ սահմանը 1975 թուականի խորհրդային քարտեզներու հիման վրայ որոշելու՝ նախընտրելով աւելի հին քարտեզներ, որոնք, ըստ անոր, շատ աւելի տարածքներ կու տան Ատրպէյճանի: Ան նաեւ յիշատակեց այն ծիծաղելի միտքը, որ «Իրեւանը» (Երեւանը) ատրպէյճանական հին քաղաք է: Ալիև նաեւ յայտարարեց, որ կան ատրպէյճանական ութ գիւղեր, որոնք կը գտնուին Յայաստանի տարածքին մէջ: Կարեւորը այն է, որ Ալիև յայտարարեց, թէ Ատրպէյճան դուրս պիտի չբերէ իր զինուժը Յայաստանի Յանրապետութեան տարածքի այն հատուածներէն, զորս բռնագրաւած է Մայիս 2021-էն մինչեւ Սեպտեմբեր 2022: Ան առաջարկեց Յայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագիր կնքել հի՛մա՝ սահմանի որոշման հարցը ձգելով ապագային:

Բախելով Ալիևի պէս ամբարտաւան եւ ռազմատենչ ղեկավարի՝ Փաշինեան պէտք է դադորի խաղաղութիւն մուրալէ, ինչ որ թուլութեան նշան է, եւ որ Ատրպէյճանին կու տայ կարելիութիւն՝ աւելի շատ զիջումներ պահանջելու Յայաստանէն: Յայաստանի գլխաւոր երկու առաջնահերթութիւնները պէտք է ըլլան ձեռնհաս ղեկավար եւ հզօր բանակ ունենալը, որպէսզի կարելի ըլլայ իր երկու թշնամիներուն՝ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ սպառնալիքները կանխել:

**Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան  
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան**

### ՍՈՒՐԻԱՆ ՅԱՒԿԸ...

▼ Սկիզբ՝ էջ 1

Յաղորդագրութեան մէջ յիշուեցաւ. «Սուրիոյ պաշտպանութեան նախարարը եւ ապահովական մարմինները իրենց յորդանանցի պաշտօնակիցներուն նամակներ յղեցին՝ Սուրիոյ հետ սահմանները հսկելու գործակցութեան առաջարկ յայտնելով, սակայն նամակները անտեսուեցան եւ յորդանանեան կողմէն որեւէ արձագանգ չստացանք այս գծով»:

Նախարարութիւնը եզրափակելով շեշտեց, որ Սուրիա նախանձախնդիր է Յորդանանի հետ իր եղբայրական յարաբերութիւնը պահելու, յատկապէս տարածաշրջանի ներկայ բարդ պայմաններուն լոյսին տակ, Յորդանանէն եւս կ'ակնկալէ նման նախանձախնդրութեան ցուցաբերում:

### ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ...

▼ Սկիզբ՝ էջ 1

դութեան հաստատման համար իրենց արիւնը կը հեղեն:

Այցելուները սրբազան հօր Նուրեցին պարսկական ոճի ձեռակերտ յուշանուէր մը, ինչպէս նաեւ պատկերագիրք մը, ուր նկարագրուած էր Իրանի նախկին հոգեւոր առաջնորդին այցելութիւնները՝ քրիստոնէայ եւ յատկապէս հայ նահատակներու ընտանիքներուն:

Սրբազան հայրը այցելութեան համար շնորհակալութիւն յայտնեց պարոն հիւպատոսին եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան: Ան

թեմի ժողովուրդին ու ժողովակալութեան անուսով ջերմագին բարեմաղթութիւններ ուղղեց անոնց:

### 25490 ՆԱՀԱՍԿ ԵՒ...

▼ Սկիզբ՝ էջ 1

ըով 7 Յոկտեմբեր 2023-էն մինչեւ օրս արձանագրուած է 25490 նահատակ եւ 63354 վիրաւոր:

Պաղեստինի Առողջապահութեան Նախարարութիւնը այսօր հաղորդագրութեամբ մը յայտնած է, որ Իսրայել վերջին 24 ժամուան ընթացքին 22 ոճի գործած է Կազգայի շրջանին մէջ, որուն հետեւանքով արձանագրուած է 195 նահատակ, 355 վիրաւոր, յարձակման 109-րդ օրը նահատակներուն թիւը հասցնելով 25490-ի, վիրաւորներունը՝ 63354-ի:

Վիրաւորներէն շատեր ցարդ փլատակներու տակ կը մնան:

### ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ...

▼ Սկիզբ՝ էջ 1

մէջ: Ինչպէս կրնաք տեսնել, մինչ օրս շօշափելի եւ առարկայական քայլեր այս ուղղութեամբ կամ չեն կատարուած, կամ վերջնական արդիւնք չկայ: Այդ սահմանը նշուած խումբի մարդոց համար բաց չէ», ըսաւ Միքայելեան:

Նախարարը նշեց, որ երկու կողմէն եղած է ենթակառուցումներու ուսումնասիրութիւն՝ անցակէտերու, ճանապարհներու, կամուրջի մասով, սակայն սահմանը կը շարունակէ մնալ փակ:



## Թուրքիոյ նուրջ

### ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ ԿԸ ՍՊԱՍՈՒԻՆ ԷՐՏՈՂԱՆ-ՌԱՅԻՄԻ ԵՒ ԷՐՏՈՂԱՆ-ՓՈԻԹԻՆ ՀԱՆԴՊՈՒՄՆԵՐ

Թուրքիոյ Նախագահ Ռեժեպ Թայյիպ Էրտողան 24 Յունուարին Թուրքիոյ մէջ հանդիպում ունեցաւ Իրանի Իսլամական Հանրապետութեան Նախագահ Իպրահիմ Ռայիսիի հետ:

Երկու առաջնորդները քննարկեցին շարք մը հարցեր՝ ամենաուրիշ, մշակոյթի, գիտութեան եւ այլ ոլորտներու վերաբերեալ, որոնց շուրջ ձեռք բերուեցաւ շուրջ 10 համաձայնագիր:

Համաձայնագրերը պիտի կնքուին Թուրքիա-Իրան բարձր մակարդակի գործակցութեան 8-րդ հանդիպումին ընթացքին:

Օրերս Անգարայի մէջ հանդիպում պիտի գոյանայ Նաեւ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

Փութին-Էրտողան հանդիպումի օրակարգը պիտի առնչուի ռուս-ուրբանական պատերազմին, Պաղեստինի Կազգայի հատուածին մէջ տիրող իրավիճակին եւ Կարմիր ծովուն մէջ տեղի ունեցող վերջին զարգացումներուն:



### ՅՈՒՆԱԿԱՆ ՄԱՍՈՒ «ԹՈՒՐԷԻԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՎՐԵԺ ԿԸ ԼՈՒԾԷ «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՐԴԻ» ՆԱԽԱԳՏՈՎ»

Յունական «Tanea» թերթը գրել է, որ Թուրքիա պատմական վրեժ կը լուծէ «զարգացման ուղի» նախագիծին միջոցով, որ կը սկսի Պարսից ծոցէն եւ կը տարածուի մինչեւ Եւրոպա՝ Կարմիր ծովու կարեւոր նեղուցներուն բնական գործունեութիւնը խափանած յարձակումներէն ետք:



«Չարգացման ուղի» նախագիծը, որ Թուրքիոյ Նախագահին կողմէ կը նկարագրուի որպէս «նոր մետաքսի ճանապարհ», կ'որջունուի որպէս աշխարհաքաղաքական հաւասարակշռութեան կարեւոր քայլ Կարմիր ծովու հիմնական նեղուցները կաթուածահար դարձուցած յարձակումներէն ետք:


«Աշխարհաքաղաքական տոմիսոյի քարտը» վերնագիրով հրապարակուած վերլուծութեան մէջ յոյս փրոֆետոր Աթանասիոս Պլատիաս միջանցքային պատերազմներու շրջագիծին մէջ ուշադրութիւն կը հրաւիրէ Թուրքիոյ դիրքերու ամրապնդման վրայ:

Յօդուածին մէջ կը նշուի, որ Թուրքիոյ «զարգացման ուղի» նախագիծը, որ կ'երկարի Պարսից ծոցի Ֆաու Նաւահանգիստէն Իրաքի Պարսա Նաւահանգիստով մինչեւ Իսթանպուլ, ապա Պուլկարիոյ մէջէն մինչեւ Եւրոպա, արդէն սկսած է իրագործուիլ Իրանի կողմէ աջակցութիւն ստացող հուրիներուն յարձակումներէն ետք:

Վերլուծութեան մէջ, որ կը յիշեցնէ 1869-ի Սուեզի ջրանցքին բացումը եւ Թուրքիայով անցնող Մետաքսի ճանապարհի դերին եւ նշանակութեան թուլացումը, կ'ըսուի. «Թուրքիա հիմա պատմական վրեժ կը լուծէ Սուեզի ջրանցքի կարեւորութեան նուազ եցման միջոցով»:

## ԱՌԱՋԱԽՈՐԱՅ ՊԱՅՔ

Առաջաւորաց Պահքը հաստատուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէ: Ըստ պատմագրութեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի Տրդատ թագաւորին ու արքունի աւագանիին կը թելադրէ հինգ օր ծով պահել՝ մկրտութեան խորհուրդը ստանալէ առաջ: Տրդատ թագաւոր եւ իր նախարարները, հետեւելով Ս. Գրիգոր Լուսաւորչի թելադրութեան, հինգ օր ծով կը պահեն եւ կ'ազատին դելերէն ու մարմաւոր ախտերէն: Այս իսկ պատճառով, սկզբնական շրջանին, Առաջաւորաց պահքը կը կոչէին «փրկութեան պահք»:



Այդ հինգ օրերուն, ժողովուրդը իր թագաւորին հետ ո'չ միայն ինքզինք գրկած էր կերակուրներէն, այլ ինչպէս պետք է, հոգեւոր խիստ պահեցողութեամբ մեծապէս կը զոջար իր նախկին հեթանոսական, ամբարոյ կեանքի բոլոր մեղքերուն համար, ամէն տեսակ օրինազանցութիւններուն համար, մանաւանդ հայոց թագաւորը՝ Տրդատ եւ մեծամեծները, որոնք քրիստոսի հաւատքի պատճառով Սուրբ Գրիգոր Լուսաւորչի թագաւորի տանջանքներու, չարչարանքներու ենթարկելէ յետոյ օձերով լեցուն եւ մուր, խաւար խոր փոսը՝ վիրապէս էին թողած, իսկ Հռիփսիմեան կոյսերը՝ չարչարելով սպանած:



Այս պայմաններուն ներքեւ հաստատուած է Առաջաւորաց Պահքը կամ Առաջաւորքը՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջին պահքը՝ որով եւ կը բացատրուի իր անունը՝ «Առաջաւորաց»:

Առաջաւորաց պահքը կը սկսի Զառասնորդաց պահքէն (Մեծ պահքէն) երեք շաբաթ առաջ, Սուրբ Սարգիս Զօրավարի տօնին նախորդող երկուշաբթի օրէն, յատուկ է միայն Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ կը տեւէ հինգ օր:

Նկատի ունենալով ծոմապահութեան խիստ պայմանները, ներկայիս Առաջաւորացը կը պահուի միայն երեք օր:

Առաջաւորաց պահքի ընթացքին, եկեղեցւոյ մէջ Ս. եւ Ամմահ Պատարագ չի մատուցուի եւ Ս. Գիրքի ձայնաւոր ընթերցում չի կատարուի:

Միջնադարուն, Առաջաւորաց պահքը թիւրիմացաբար կապակցուած էր Ս. Սարգիս զօրավարի տօնին հետ: Այս պատճառով ալ ներկայիս տակաւին կը կոչուի Ս. Սարգիսի պահք՝ թեւ Առաջաւորաց պահքը առնչութիւն մը չունի Ս. Սարգիսի յիշատակութեան հետ:

Առաջաւորաց Պահքի վերջին՝ Ուրբաթ օրը, Յովնան մարգարէի (Ն. Բ. 8-րդ դար) յիշատակի օրն է, եւ Եկեղեցին կը կարդայ անոր գիրքը, ուր նոյնպէս կը խօսուի պահքի եւ ապաշխարութեան մասին. «Թագաւորի եւ անոր մեծամեծներու կողմէ Նիսուէի մէջ յայտարարուեցաւ, եւ ազդարարուեցաւ, թէ մարդ եւ անասուն, հօտ եւ արջառ թող ոչինչ ուտեն, չճարակեն եւ ջուր չխմեն: Եւ մարդ եւ անասուն քուրճ հագած, ի սրտէ արթթեցին Աստուծոյ, բոլորը ետ կանգնեցին իրենց չար ճանապարհներէն եւ անօրէնութիւններէն՝ որ իրենց ձեռքով կը կատարուէին...» (ՅՈՒՆ. Գ 7-8):

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Չոլաքեան եւ Չիմոյեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին, Հոգշ. Տ. Սանուկ Վրդ. Պարիխանեանին, Հոգշ. Տ. Արմէն Արդ. Գալաճեանին, Զահանայից Դատուն, Պատուելի Ասատուր Մնչեբեանին, Հայ Աւետ. Էմմանուէլ Եկեղեցւոյ ԲՁ Ընկերակցութեան, ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութեան, ՀՄԸՄ-ի Սկաուտ Խորհուրդի Վարչութեան, Ազգ. Զարէն Եփփե Ճենարանի Շրջանաւարտից Միութեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղականութեան, բարեսիրական միութիւններուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց դուստրին եւ հարազատին՝



### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՓԱԹԻԼ ՉՈՒԱՔԵԱՆԻ

մահուան սուգին: Հանգուցեայի քառասունցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 28 Յունուար 2024-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ-Հալեպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցւոյ ներքնասրահը:



Պրիմակէս

ԱՅՍ ԱՅԱԻՈՐ ԼԵՉՈՒՆ



Մարուշ Երամեան

Գերմաներէն պիտի սորվիմ, կ'որոշեմ եւ կը սկսիմ փնտռել թէ ո՛ր կրնամ հետեւիլ գերմաներէն լեզուի դասերու:

Տրամաբանական է գերմաներէն սորվելու այս փափաքս, որովհետեւ աղջկա իր ընտանիքով Հանովըր (Գերմանիա) հաստատուել է:

Բայց տարին մէկ կամ երկու անգամ իրենց այցելելու համար կարելո՞ր է գերմաներէն գիտնալ:

Այս դժուար, անտանելիորէն հակա-տրամաբանական լեզուն (մեզի, հին յոյներուն կամ ֆրանսախոսներուն համար անտրամաբանական), որուն մասին Մարք Թուելը երկար յօդուած մըն ալ գրեր է՝ «The Awful German Language» 1880-ին, որ խորքին մէջ չորրորդ ծանօթագրութիւնն է իր ճամբորդական երկին՝ A Tramp Abroad, կ'արժէ՞ սորվիլ տարեկան մէկ-երկու այցելութեան համար:

Այստեղ փոքր փակագիծ մը բանալով պատմեմ, որ ամերիկացի հեղինակը փորձեր է «այս ահաւոր լեզուն» սորվիլ, երբ տասնհինգ տարեկան էր եւ ... ծախողեր է:

Յետոյ, 28 տարի ետք, Եւրոպա ճամբորդելու նախօրէին կրկին ձեռնարկեր է սորվելու, եւ այս անգամ կրցեր է կատարելագործել լեզուն: Բայց լեզուին դժուարութիւնը ստիպել է զինք իրապէս երգիծական էջեր նուիրել անոր:

Երբ Գերմանիա հասեր են, ճամբորդութեան իր ընկերը ըսեր է՝ «Մա՛րք, գերմաներէն խօսէ՛, կարգ մը գերմանացիներ անգլերէն կը հասկնան»:

1897-ի Դեկտեմբերին Մարք Թուելն Վիեննայի մէջ դասախօսութիւն մը տուեր է «Գերմաներէնի Սարսափները» խորագրով: Եւ իր ըսածները հաստատելու համար ամերիկացի հեղինակը անգլերէնի թարգմաներ է իր դասախօսութիւնը, բայց ... գերմանավարի. արդիւնքը իսկապէ՛ս գաւելշտալի է:

Իր ծանօթագրութիւն-յօդուածին մէջ Թուելն քանի մը օրինակներ կը բերէ, որոնցմէ ամենէն ահաւորը բայերը կիսելու եւ անոնց միջեւ այլ բան մը թխմելու կանոնն է. պարզ չէ՞ որ քանի մը մտթրանոց բառեր կրնան կազմուիլ այս ձեւով:

Կը կարծեմ, թէ բոլոր անոնց, որոնք կը դժգոհին հայերէնի դժուարութենէն, պէտք է ստիպել, որ գերմաներէն սորվին. այդ պարագային, բաղդատելով երկու լեզուները, մեծ ուրախութեամբ պիտի սորվին հայերէնը եւ իսկապէ՛ս պիտի հրճուին, ի տես մեր լեզուին դիւրութեան ...

Այս բոլորը կ'ըսեմ, ցոյց տալու համար թէ որքան մեծ տառապանքի պիտի ենթարկուիմ, գերմաներէն լեզուն սորվելու փափաքս իրագործելու համար:

Փափաքս սակայն այլ պատճառ մը եւս ունի՝ գերմանական մամուլը, զոր կը թերթատեմ եւ, առանց շատ բան հասկնալու, կը հիանամ:

Կը հիանամ ո՛չ միայն գեղեցիկ պատկերներով, թուղթին որակով՝ հիանալիորէն թեթեւ եւ մատներուդ տակ հաճելի, այլ նաեւ յօդուածներուն հետաքրքրականութեամբ (կուկըլի թարգմանական գործիքը ողջ մնայ):


Գրախանութներուն մէջ մեծ պատեր կան մամուլին նուիրուած, ուր կարելի է գտնել ամէն, իրապէ՛ս ԱՄԵՆ նիւթի վերաբերեալ հանդէսներ՝ ձիերու եւ շուներու մասին, ձկնորսութեան մասին, գինիներու, տնային յարդարանքի, ճարտարապետութեան, խոհագրերու ... թուելու համար մէկ քանին:

Իսկ սուփոր-մարքէթներուն մէջ ծախուած թերթերն ու հանդէսները նուազ մասնագիտական են եւ անելի ժողովրդային, ուր մեծ բաժին մը մանկական թերթերու եւ հանդէսներու յատկացուած է:

Այս բոլորէն անկախ, մեծ մարքէթներն ու առտնին մաքրութեան դեղերու, իրերու եւ կնոջական դիմայարդարումի նուիրուած շատ մեծ խանութներէն իւրաքանչիւրը ունի իր ամսաթերթը, ուր անելի աչքի կը գարնեն օգտակար յօդուածները, քան անոնց ընդմէջէն եղած ծանուցումները. այս վեր-



ջիններն ալ սոսկական ծանուցումներ չեն, այլ բացատրութիւններով յագեցած գրութիւններ, որոնք ընթերցողը կը մղեն մտածելու, եւ ըստ այդ՝ համոզուելու կամ ոչ: Ամէն պարագայի համոզուելու կամ չհամոզուելու համար, նախ տուեալ ապրանքին մասին պէտք է որոշ գաղափար ունենալ, իսկ գաղափար ունենալու համար, պարզ է որ պէտք է գրութիւնը կարդալ:



Այս մեծ վաճառատուներու հանդէսները բոլորն ալ ձրիաբար կը տրամադրուին վաճառատան մուտքին:

Օրինակ շատ պիտի փափաքէի գիտնալ, թէ ի՞նչ կ'ըսէ ժո՞ւ վաճառատան alverde հանդէսին այս յօդուածը, որուն նկարը յստակօրէն կը բացատրէ, թէ համացանցային հարթակներու մասին է գրութիւնը, կամ միւսը, որ թերած մանուկներու մասին ըլլալու է:

Մեծ մարքէթները տարին երկու թէ երեք անգամ հարուստ խոհագիրք-հանդէսներ ալ կը հրատարակեն. ասոնք եւս, մնացեալին նման ձրի կը տրամադրուին:

Երբ առաջին ան-

գամ տեսայ այս հանդէսները, նախ անմիջապէս գացի փնտռելու խմբագիրը եւ նայելու թէ խմբագրական կազմ ունի՞ն:

Ունին, ինչպէս որեւէ ինքզինք յարգող հանդէս: Բայց մանաւանդ ընթերցող ունին:

Երբ նման հանդէսներու հանդիպեցայ առաջին անգամ, հարցումը ցատկեց միտքիս մէջ՝ «Ո՞վ կը կարդայ այս հանդէսները»:

Պատասխանը անելի քան պարզ էր սակայն՝ «Եթէ ընթերցող չունենան, կը դադրին»:

Ահա թէ ինչո՞ւ կ'ուզեմ գերմաներէն սորվիլ, որովհետեւ իրապէ՛ս կ'ափսոսամ այսքան հանդէս ունենալ ափերուս մէջ եւ չկարենալ ընթերցել զանոնք:

Բայց ես կը մտածի տարբեր ուղղութեամբ յօդուածս տակիլ, պատասխանելու համար «Ի՞նչ է մամուլին դերը այսօր» հարցումին:

Ի՞նչ է մամուլին դերը այսօր. ճշմարտութիւնը փոխանցել ընթերցողին, թէ՞ սնամէջ բառերով սնամէջ յոյսեր օրօրել եւ կամ՝ վերապրեցնել անցեալ մը, հեռու թէ մօտիկ անցեալ մը, որ վերջացած է եւ որ ալ բնա՛ւ ետ պիտի չգայ:

Այսքանը անշուշտ մեր՝ հայկական, մանաւանդ սփիւռքահայ մամուլին մասին է, որ կէս դարէ ի վեր կը տառապի ընթերցողի պակասէն:

Կար ժամանակ, երբ մեր մամուլը կը ծառայէր ո՛չ միայն լուրեր փոխանցելու, երբ տակաւին ընկերային ցանցեր, ընդհանրապէս համացանց գոյութիւն չունէր տակաւին, այլ կը ծառայէր նաեւ ու մանաւանդ կարծիք ձեւաւորելու եւ որոշ երեւոյթներ պարզելու:

Մամուլին վստահուած այլ դեր մը եւս կար՝ գրականութիւն տարածել, գրական ճաշակը նրբացնել եւ նոր գրողներու առիթ տալ, որ իրենց գործերը ընթերցողի դատին յանձնեն:

Այն օրերուն ընթերցողները անելի բանիմաց էին, իսկ նոր գրողները՝ անելի պատասխանատու եւ զգոյշ: Որեւէ սխալ, որքան ալ փոքր, կրնար անդրադարձ ունենալ եթէ ոչ ընթերցողին, ապա անպայման խմբագիրին կողմէ:

Շատ լաւ կը յիշեմ բանաստեղծութեան տող մը, զոր կարդացեր էի Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիրի խօսքին մէջ, ուր կը ներկայացնէր նոր բանաստեղծ մը, որուն անունը այսօր չեմ յիշեր, բայց տողը չեմ կրնար մոռնալ. խորքին մէջ ոչ թէ տող, այլ՝ միայն երկու բառ.

«... համբոյր ու նազ»

Որոնց համար խմբագիրը կ'ըսէր՝ «Մա՛նչս, պէտք է գիտնաս որ նայի նազը կու գայ, ապա համբոյրը, համբոյրը առնելէ ետք, ալ ի՞նչ նազ ...»:


Ասանկ բաներ, որոնք այսօր չկան եւ որոնց կարօտը կը ստիպէ նոր լեզու մը սորվիլ:

Ճի՞շդ եմ թէ ոչ, չեմ գիտեր:



## ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՆԿԻՆ

### ՏԱԿԱՒ ԱՌ ՏԱԿԱՒ ԿԸ ՄԱՅԱՆԱՍ



Փայոս Ներունտ



Տակաւ առ տակաւ կը սկսիս մահանալ  
Եթէ մերթ ընդ մերթ չուզես ճամբորդել  
Չուզես ընթերցել  
Կեանքի երաժշտութիւնը սրտով ունկնդրել  
Ու այդ բոլորին մէջ ինքնզինքդ գտնել:

Տակաւ առ տակաւ կը սկսիս շիջանիլ  
Եթէ ոտնակոխ դարձնես վարկդ սեփական  
Ու փակես դռները ամէն օգնութեան:

Տակաւ առ տակաւ կը սկսիս հիւծիլ  
Եթէ սովորութիւններուդ լուռ գերին դառնաս  
Ու ամէն պայծառ օր նոյն ճամբան բռնես  
Վարժութիւններուդ հաւատարիմ ծառան մնաս  
Ու կեանքդ նոր երանգներով չզուտաւորես  
Անծանօթի մը հետ խօսիլ իսկ չփորձես:

Տակաւ առ տակաւ կը սկսիս մահանալ  
Եթէ կոպտօրէն վանես տարփանքը սրտիդ  
Յրայրքը հոգւոյդ  
Ու թոյլ չտաս որ աչքերդ յոյզերով շողան  
Ու սիրտդ տրոփէ կաթոգին սիրով:

Տակաւ առ տակաւ կը սկսիս հիւծիլ  
Եթէ յարմարիս տհաճ գործին, անհրապոյր սիրոյն  
Ու մնաս անծանօթ՝ անորոշը պարզող,  
Երազներդ փնտռող արկածախնդրութեան  
Եթէ կեանքիդ մէջ անգամ մ'իսկ չյանդգնիս  
Ընդդիմանալ յորդորին  
Եւ ընտրել քու ուղին:

Անգլերէն թարգմանեց  
Չարմիկ Պօղիկեան

## ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ...

Մկրտչի ԼԶ 1

քարտուղար) յաջորդաբար քննարկեցին տարածաշրջանի Նորագոյն իրադարձութիւնները, Ատրպէյճանի իրազորած ցեղասպանութեան եւ ցեղային գտման հետեւանքները, միջազգային իրաւական աստեաններու մօտ՝ ռազմագերիներու, ձերբակալուածներու եւ պահուող անձանց վերադարձի հնարաւոր ուղիները արծարծելու, Ատրպէյճանի գործադրած ռազմական յանցագործութիւններու թղթածրարի պատրաստութեան եւ հոգեւոր ու մշակութային ժառանգութեան պահպանման ծրագիրի մշակման խնդիրները:

Խորհրդածողովը արձանագրեց -  
1) Միջազգային իրաւունքի մասնագետներ եւ ցեղասպանագետներ Արցախի հայաթափումը որակեցին ցեղասպանութիւն:

2) Ինչպէս 20-րդ դարու Մեծ Եղեռնը, Արցախի հայաթափումը տեղի ունեցաւ ի լուր անտարբեր մնացած միջազգային հանրութեան, ներառեալ Յայաստանի գործընկեր Ռուսիոյ:

3) Արցախի հարցը փակուած չէ. կարելի չէ լուռ մնալ ոճիրին, անոր ուրացման եւ շարունակման վտանգին դէմ յանդիման:

4) Արցախի հարցով յանձնառութիւնը յանձնառութիւն է Յայաստանի հողային ամբողջականութեան, անկախութեան եւ ապահովութեան:

5) Դեմ յանդիման ազգային գոյութեան սպառնալիքին, Յայրենի հայութիւնն ու Սփիւռքը պարտին վերջ տալ ներքին պառակտումներու, ոյժերու ջլատման եւ կրաւորականացման, համախմբուիլ ի խնդիր սպառնալիքի միասնական դիմակայման:

6) Նպատակաւորուած աշխատանքներ ծրագրել դէպի հզօր Յայաստան եւ հզօր Սփիւռք՝ իբրեւ մէկ ամբողջութեան վերակայացում:

Խորհրդածողովը գործնական աշխատանքներու առումով որոշեց -

ա) 24 Ապրիլ 2024-ի նախօրեակին Յայաստանի, Արցախի, Սփիւռքի եւ ոչ-հայ մասնագետներու մասնակցութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ, իրաւիքով Արցախի դէմ իրազորած ցեղասպանութեան եւ միջազգային դատական աստեաններու մօտ Ատրպէյճանը պատասխանատուութեան կանչելու ուղիներուն նուիրուած միջազգային գիտածողով:

բ) Հրատարակութեան ձեռնարկել «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»-ի 19-20 Յունուար 2024-ի խորհրդրդածողովի նիստերու ժողովածուն:

գ) «Արցախի նկատմամբ Ատրպէյճանի կողմէ 2016-2023-ին կատարուած յանցագործութիւնները եւ անոնց հետեւանքները» հետազօտական ծրագրի շրջանակներուն մէջ համակողմանի վերլուծութեան ենթարկել յիշեալ ժամանակահատուածի ընթացքին Արցախի դէմ Ատրպէյճանի իրազորած յանցագործութիւնները՝ նախանշելով անոնց դատապարտման եւ հետեւանքներու վերացման հնարաւոր մեթոտներն ու գործիքակազմերը:

դ) Պատրաստել Արցախի բըռ-

նագրուած տարածքներուն մէջ մշակութային ցեղասպանութեան ենթարկուած եւ անոր սպառնալիքին տակ գտնուող հոգեւոր-մշակութային ժառանգութեան արժեքներու ցանկը:

ե) Արամ Ա. Վեհափառ Յայրապետին եւ Եկեղեցիներու Յամաշխարհային Խորհուրդի ճամբով կոչ ընել, որպէսզի անյապաղ ազատ արձակուին ռազմաքաղաքական առեւանգուած ղեկավարութիւնն ու ապօրինաբար պահուող ռազմագերիները:

Խորհրդածողովի մասնակիցները անհրաժեշտ նկատեցին հարթակի նիստեր գումարել հերթական յաճախականութեամբ, հետեւելու, քննարկելու եւ աշխատանքային ուղիներ ճշդելու համար Յայաստանի եւ հայութեան վերաբերեալ ամենէն հրատապ գործընթացներուն գծով:

## ՎԵՐՈՊԱՅԻՆԵՐԸ...

Մկրտչի ԼԶ 1

իոյ, Կիպրոսի, Չեխիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Յունաստանի, Ռումանիոյ, Սպանիոյ, Շուէտի, Չուիցերիոյ, Յոլանտայի եւ Միացեալ Թագաւորութեան մէջ:

Եւրոպայի հայութիւնը, ինչպէս նաեւ տասնեակ եւրոպական կազմակերպութիւններ, 27-28 Յունուարին հաւաքներու եւ զանազան այլ գործողութիւններու միջոցով իրենց ազգային կառավարութիւնները, ինչպէս նաեւ համաեւրոպական ղեկավար կառոյցները պիտի յորդորեն:

1. Յստակօրէն դատապարտել Արցախի հայութեան նկատմամբ Ատրպէյճանի կողմէ կիրառուած ցեղային գտումները եւ ցեղասպան քաղաքականութիւնը:

2. Անհատական պատժամիջոցներ սահմանել Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան նկատմամբ, որ պատասխանատու է Լաչինի միջանցքի անօրինական շրջափակման, իրադարձութիւններու, 19-20 Սեպտեմբերի յարձակումին եւ Արցախի մէջ իրականացած ցեղային գտումին:

3. Օգտագործել առկայ բոլոր լծակները՝ ստիպելու Ատրպէյճանը անյապաղօրէն եւ անվերապահօրէն ազատ արձակելու 27 Սեպտեմբեր 2020-էն ձերբակալուած բոլոր հայ ռազմագերիները, քաղաքացիական պատանդները, ինչպէս նաեւ Սեպտեմբեր 2023-էն ի վեր առեւանգուած Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութեան ներկայացուցիչները:

4. Նպաստել 2024-ի միջազգային անվտանգային երաշխիքներու տրամադրումին՝ արցախահայրութեան հնարաւորութիւն տալով օգտուելու հայրենիք վերադառնալու անքակտելի իրաւունքին, Արցախի տրամադրելի միջազգայնօրէն երաշխաւորուած ինքնակառավարման կարգավիճակ:

5. Արդիւնաւետ ճշում գործադրել Ատրպէյճանին վրայ՝ բացառելու Յայաստանի Հանրապետութեան նկատմամբ յարձակումի որեւէ դրսեւորում եւ Յայաստանի ինքնիշխանութիւնը վտանգող որեւէ գործողութիւն:

6. Յայաստանին տրամադրել համապատասխան օգնութիւն՝ Արցախէն բռնի տեղահանուած բնակչութեան կարիքները պատշաճ կերպով հոգալու համար:

Երաւի ի՞նչ երկեր  
Կարճե՞նք...

Radio Yeraz

www.radioyeraz.com



## ՏԱՐԻՔ ԵՒ ՏԱՐԵՂԱՐԶ՝ ԵՐԿՈՒ ԳԵՂԵՑԻԿ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

Գեորգ Պետիկեան

– Այս ամիս տարեդարձդ է...: Մենեակին անկիւնը իր նըստած տեղէն, կինս էր յիշեցնողը, երբ հին տարուայ օրացոյցէն նորին կ'անցընէր կարեւոր թուականներու իր կատարած նշումները:

– Գիտեմ,– ըսի իբրեւ պատասխան, անկեղծ եւ արդար ու մանաւանդ յարգանքով ու գուարթ ծայտով:

Ու ինչ մեղքս պահեմ, ամեն անգամ երբ տարեդարձիս մասին խօսուի, ինքնաբերաբար տրամադրութիւնս գիտարբեր ուղիներ կ'առաջնորդէ:

Այո՛, այս ամիս է տարեդարձս: Բայց... որո՞ւ հոգը:

Տասնամեակներ առաջ այս անունը մեր տունէն, մեր բազմամարդ բակէն եւ նոյնիսկ մեր հայրենի խճողուած թաղէն բացակայ էր: Գոյութիւն չունէր: Գիտեմ, որ ամբողջ թաղին մէջ եւ բոլորին համար ալ օրերը կապուած էին առօրեայ մտահոգութիւններու:

Մենք ո՛ր, տարեդարձ յիշողը, նշողն ու տօնողը ուր...:

Իսկ այս օրերուն...ահա ամեն օր, տեղէ մը կը լսես այս բառը: Ու կ'եզրակացնես, ըսելով.– տարօրինակ է այս աշխարհը, որովհետեւ իր տարօրինակութիւններով, կողք-կողքի դրուած ու շարուած ալ են հրաշալի, ապշեցուցիչ, տխուր, ցաւալի եւ յուզիչ պատկերներ: Տակաւին այս մասին երբեմն մտածումները, իրենք զիրենք զգացումներէն անելի կը պարտադրեն: Ի՞նչ կըրնանք ընել:

Կեանք եւ տարիք իրարու ամբօրէն առնչուող այս երկուորեակները, իսկապէս որ բարդ բաներ են, անհասկնալի եւ նոյնքան ալ հասկնալի, սակայն նաեւ յաճախ ալ սարսափելի: Պաշտելի ու նոյնչափ ալ անհանդուրժելի: Այլ խօսքով՝ կեանքը ծանրացնող ազդակներ:

Ու ինքնաբերաբար կը յիշեմ գաղթեալ երկրէ-երկիր: Նաեւ կը յիշեմ, թէ ինչպէ՞ս մոռացութեան եւ կարօտի արցունքներով, կասկածի եւ տարակուսանքի նախաձեռնով, յաճախ այդ երկիրներէն ներս գացած եմ հոսանքէն քշուած, համրելով չոր ու ցամաք կեանքիս օրերը, որոնք երբեմն յարատեւ տաճարի տաճարի երգի կը նմանին: Անոր համար, յաճախ հաւատքիս փնտռութեամբ զբաղեցայ:

Իսկ հիմա, այդ բոլորէն ետք, ապրուած օրերուս, ժամերուս եւ կեանքիս բանալին է որ կը փնտռեմ: Մտովի եւ արագ, կը փորձեմ վերակազմել անցեալի գանազան գունաւոր դէպքերը,

որովհետեւ անպայման հին օրերու գեղեցիկ եւ լեղի յուշերու թարմացումով է, որ կ'ուզեմ վերապրիլ: Կ'ուզեմ յիշել իմ հինը, իմ անուշը, սերն ու թախիժը, որոնք պատերուն տակ երիտասարդութիւնս մեծցաւ:

Եթէ շատ ու շատ տասնամեակներ առաջուայ մանուկ տարիքը ունենայի, անկասկած, որ հիմա տարբեր օր մը եղած պիտի ըլլար ինծի համար:



Արդէն շատոնք թեանկոխեր եմ կեանքիս աշունը, բայց անկեղծօրէն գոհ եմ «ըրածներէս»: Բնական է, որ տարեդարձի «պատմութեանս» ետին կցուած է նաեւ տարիքս, իր նոր թիւով:

– Մեծ թիւ մը՝ նոր թիւ մը. անգիտակցաբար եւ մտահոգ կը կրկնեմ.– Ի՞նչ լաւ: Այս կը նշանակէ, թէ...

Չեմ փորձեր անելորդ ենթադրութիւններու դմները թակել, որովհետեւ անկախ այս բոլորէն, արդէն հին ու նոր յուշեր, լուսաւոր եւ յաճախ ալ մութ յուշեր, մեծ ու փոքր դէպքեր եւ դեմքեր անակնկալ խոր գիտակցութեամբ, իրապաշտ եւ նոյնքան ռոմանթիք, երազկոտ ու նոյնքան ալ երբեմն զարմանալի եւ անիրակական՝ կամաց-կամաց սկսած են մտքիս պաստառին վրայ երեսնալ:

\*\*\*

– Պա՛պ, այս Շաբաթ օր տարեդարձդ է...: Տղաս էր, այս անգամ յիշեցնողը:

– Գիտեմ,– կ'ըսեմ, իբրեւ կարճ պատասխան, յոգնած ծայտով մը: Եւ ապա սենեակիս պատը զարդարող հայելիիս մէջ եւ գիտ կը դիտեմ: Աստուած ի՛մ... ճակատս տարիներէ ի վեր, արդու կը անցած տաբառիս ակօսներուն կը նմանի, իսկ մագերս՝ պատկառելի ճերմակութիւն մը ստացած էին: Է՛հ, աշխարհ...: Կեանք ըսուածը անուշ բան մըն է եղեր, հաճելի է եւ որ

կ'արժէ գայն անպայման ապրիլ: Ու անկեղծօրէն խոստովանիմ, որ տարիները հակառակ իրարայայտող դժուարութիւններու եւ ճախողութիւններու, ոչ միայն գեղեցկացուցած էին կեանքս, այլ՝ երբեմն ալ տեսակ մը հրապոյր տուած էին, տաքուկ արեւ մը ունենալու երջանկութիւնով միատեղ:

Դարձեալ մտովի կը շարունակեմ եւ գիտ «վերատեսութեան» ենթարկել:

Թէեւ բաւական երկար փորձած եմ միշտ ըմբռնել կեանքն ու հասարակութիւնը, սակայն երբեմն չեմ յաջողած: Նոյնիսկ փորձած եմ հեռու մնալ այն ամենէն, որոնք ճախող կերպով կապկած են ուրիշները: Յաճախ ալ ապրած եմ ազնիւ տառապանքը բառերուս, եւ սակայն միշտ մէջս պահած՝ գաղափարական խանդավառութիւնս: Այս բոլորը, որովհետեւ կեանքս որպէս հաւատք եւ հաւաքական ապրում, ինծի համար ազգային ալ է:

Ու թէեւ մտքի հոսքի մը տեսական ճամբորդ մը եղած էի, բայց շատերուն նման, եւ ալ իմ հացս գրական քրտիկներն էին կամաւոր դէպի յուսախաբութիւն առաջնորդած եւ նոյնիսկ դժբախտութեան տարած պիտի ըլլայի: Վերջերս տարիքը ինծի զգացնել տուած էր իր ծանր եւ վախազու ներկայութիւնն ալ, որուն իբրեւ արդիւնք՝ որոշ, մեծ եւ բարդ առողջական խնդիրներ ունեցած էի: Երեսիս վրայ գանկ եւ աչքեր մնացած էին: Ժամերուս նման, յաճախ անտող էին նաեւ օրերս ալ: Կարծես պարզ խաղալիք մըն էի դարձած կեանքի խաղերուն ձեռքը: Սակայն շնորհիւ Ամենակալին բարի տնօրինման՝ ապաքինուած էի:

Նաեւ անելցնեմ, որ զաւակներուս եւ յատկապէս թոռներուս

ներկայութեան, կը մոռնայի տարիքս: Անոնք ինծի տարբեր կեանք կը ներարկէին, տարբեր խանդավառութեամբ: Ապրումիս շերտութիւն կու տան: Կ'երիտասարդանամ: Իբրեւ «խրատական» բոլորին ըսած եմ.– ժիր եղէ՛ք, եւ մի՛ ծերանաք: Երբեմն նման «բաներ» բաւական երկար ու լռութեամբ արտայայտած եմ:

Անոր համար ուզեցի քանի մը տողերով փնտռել կեանքիս գեղեցիկն ու ճշմարիտը, կշռել արդարն ու անիրաւը եւ այս ձեւով եւ գիտ դատել, որովհետեւ կը հաւատամ, որ տակաւին շատ գործ ու ընելիքներ ունի դասաւորելիք: Բայց...

– Պապի՛կ, այսօ՛ր տարեդարձդ է: Թոռնուհիս էր յիշեցնողը:

– Իրա՞ն... կը կատակեմ:

Ու հիմա, այս վայրկեանին նստած գրասեղանիս առջեւ, երկար կը մտածեմ: Ծիշո՞ւ է, որ միևնակ չեմ: Մտածումներովս եմ շրջապատուած: Բայց «միևնակ» եմ: Ի՞նչ լաւ ապրում է. եւ գիտ միևնակ չեմ զգար: Միևնակ կը խօսիմ, միևնակ կը հակաճառեմ, կը վիճիմ ու այս բոլորէն ետք երբ յանկարծ անդրադառնամ, երկար ճամբորդութենէ մը վերադարձողի աչքերով կը փորձեմ շուրջս դիտել ու ինքզինքս համոզել, թէ անկախ այս բոլորէն նաեւ Եական է յոյսերս կախել աղօթքներու թելերէն: Կը զգամ, որ յուզուած եմ: Աչքերս խոնաւացած: Վերջի վերջոյ ի՞նչ է մարդուս ճակատագիրը, եթէ ոչ ապրիլ, գործել, ենթարկուիլ շարժումներու եւ յեղաշրջումներու եւ ինքզինք կրկնել:

Բայց, միշտ ըսած եմ եւ հիմա դարձեալ կը կրկնեմ, թէ այս բոլորը կ'ըսեմ, կ'ապրիմ եւ կը գրեմ տարեդարձիս օրը, որովհետեւ կը հաւատամ, որ իմ օրը՝ այսօրն է, իսկ վաղը՝ Աստուծոյս:

### «ԳԱՆՁԱՍԱՐ»

#### ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլմբօշեան-Պօղիկեան  
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոմեան-Առաքելեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօլեան  
Գրաշար՝ Անի Թովայեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:



## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### Խոյ

Յաջող շաբաթ է: Դիրուրեամբ պիտի հասնիք ձեր նպատակին: Որքան որ ալ զբաղած ըլլաք ձեր հարազատներուն ալ ժամանակ յատկացուցէ՛ք:



### Ցուլ

Ձեր յամառութիւնը պիտի օգնէ ձեզի՝ յաջողութեան հասնելու: Ձեր սիրելիներուն հանդէպ հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք: Չգոյշ եւ իմաստուն եղէ՛ք:



### Երկուորեակ

Ձեր նիւթական վիճակը պիտի բարելաւուի: Մեծ գնումներ կատարելու մի՛ արտորաք: Ընկերային յարաբերութիւններ մշակեցէ՛ք:



### Խեցգետին

Դուք ձեր առաւելութիւնները պիտի յայտնաբերէք վերջապէս: Անհրաժեշտ է, որ նրբանկատ ըլլաք, որպէսզի վեճեր չծագին:



### Առիւծ

Պէտք է երկար ու քրտնաջան աշխատիք՝ յաջողութեան տիրանալու համար: Ընկերներու հետ ձեր յարաբերութիւնը պիտի վատանան, բայց համբերեցէ՛ք:



### Կոյս

Մտերիմ բարեկամներու աջակցութիւնը պիտի վայելէք: Ինքնավրտահ եւ զգոյշ քայլերով յաջառացէ՛ք եւ պիտի յաջողիք:



### Կշիռք

Պէտք է շատ աշխատիք, որպէսզի ձեր ակնկալած արդիւնքին հասնիք: Նախանձելի էք: Չզուշուրեամբ կատարեցէ՛ք ձեր գնումները, որպէսզի ձեր պաշարը չնուագի:



### Կարիճ

Ձեր յոյսը դրէ՛ք այն մարդոց վրայ, որոնք յաճախ աջակցած են ձեզի: Նոր սիրային պատմութիւն մը պիտի ապրիք եւ շերմութիւն պիտի զգաք:



### Աղեղնաւոր

Յուզումի եւ անհանգստութեան պահեր պիտի ունենաք այս շաբաթ: Հին բարեկամներ պիտի այցելեն ձեզ եւ ձեր հոգեկան վիճակը պիտի բարելաւուի:



### Այծեղջիւր

Ձեր կատարած գործերը զգալիօրէն պիտի յոգնեցնեն ձեզ: Հաստատակամ քայլերով յառաջացէ՛ք, որպէսզի լաւ տպաւորութիւն ձգէք մարդոց վրայ:




### Ջրհոս

Ի վերջոյ պիտի կարենաք յաղթել ձեր հակառակորդին: Կրճատեցէ՛ք ձեր ծախսերը: Որոշ նպատակներու իրագործումը յետաձգեցէ՛ք:



### Չուկ

Ձեր սեփական սխալները ուղղելով դուք յաջողութեան պիտի հասնիք: Տնային գործերով ալ զբաղեցէ՛ք եւ հոգատար եղէ՛ք ձեր սիրելիներուն:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

## ՄԱՐՄԻՆԸ ԻՆՉՊԷ՛Ս ՄԱՔՐԵԼ ԲՈՅՍԵՐՈՎ ԵՒ ՊՏՈՒՂՆԵՐՈՎ

Մարմինը պարբերաբար թունաւոր նիւթերէն կամ աւելորդ ճարպերէն մաքրելու համար կարելի է օգտագործել հետեւեալները:

### 1- Խնձոր եւ կասիա

Մէկ խնձոր մաքրել եւ բարակ շերտերու վերածել զայն, անոր աւելցնել 500 մլ. մաքուր ջուր, 1 թէյի դգալ փոշի կասիա, պահեցնել եւ օգտագործել ամբողջ օրուան ընթացքին: Խնձորին փոշի կասիային համադրութիւնը կը նպաստէ մեր մարսողական համակարգի մաքրութեան:



### 2- Կիտրոնի հիւթ եւ մեղր

Երկու թարմ քամուած կիտրոնի հիւթը խառնել 200 մլ. տաք ջուրին, աւելցնել 1 թէյի դգալ բնական մեղր, մէկ պտղունց քաշուած կոճապղպեղ:



Նախաճաշէն կէս ժամ առաջ խմել զայն: Այս հեղուկը կ'օգնէ մարսողական համակարգի մաքրութեան, կը զօրացնէ մեր երակներուն պատերը եւ ջերմութ կը հաղորդէ մարմինին:

### 3- Կոճապղպեղով հիւթ



Թարմ կոճապղպեղը մաքրել, մանր-մանր կտրտել զայն, վրան աւելցնել վրան 1 լիթր տաք ջուր եւ եռացնել 10 վայրկեան: Ապա քամել եւ պաղելէն ետք վրան աւելցնել մէկ պտղունց փոշի կասիա:



Օգտագործել զայն օրուան ընթացքին ուտելէն կէս ժամ առաջ: Այս հիւթը մարսողական համակարգին վրայ դրական ազդեցութիւն կ'ունենայ:

### 4- Ճակնդեղով հիւթ

Օգտագործել 1 ճակնդեղ, 2 խնձոր եւ 1 ստեպլին: Այս երեքը հում վիճակով քամել եւ ստացուած հիւթը օգտագործել օրական 2 անգամ՝ առաւօտեան եւ երեկոյեան, ուտելէն կէս ժամ առաջ: Եղէ՛ք առողջ եւ կայտառ:

## Խոհագիր

## ՊԱՆԻՐՈՎ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՈՎ ԽՄՈՐԵՂԵՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

### Բաղադրութիւն

- 4 գաւաթ ալիւր
- 1 տրոցակ թթմոր
- 1/2 թէյի դգալ աղ
- 2 ճաշի դգալ շաքար
- Փոքր գաւաթ մը հեղուկ կաթ, եթէ չունիք զայն կրնաք փոխարինել 2 ճաշի դգալ փոշի կաթով:
- 1/4 գաւաթ բուսական իւղ
- 1 գաւաթ տաք ջուր



### Պատրաստութիւն

Նախ կը խառնենք չոր բաղադրիչները, ետքը կ'աւելցնենք հեղուկ կաթը, որ պէտք է տաք ըլլայ, ետքը ըստ խմորի կարիքին կամաց-կամաց կ'աւելցնենք մէկ գաւաթ ջուրը: Խմորը կը փափուկցնենք եւ լաւ մը բուսախիւղով կը շաղենք: Կը ծածկենք զայն եւ կը ձգենք, որ մէկ ժամ հանգչի՝ մինչեւ որ չափը կրկնապատուի: Այս խմորը կրնանք օգտագործել պանիրով, միսով կամ գանազան տեսակի բանջարեղէններով պէտրելներ պատրաստելու համար:

## ԿԱՐԵՒՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՅԱՋՈՂ ԽՄՈՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Տաք ջուրը մի՛ աւելցնէք խմորին վրայ, քանի որ ան կը սպանէ թթմորը:
- Խմորը պէտք է լաւապէս հանգչի, որպէսզի դիրին կառավարուի: Սկիզբը պէտք է աւելցնել չոր բաղադրիչները, ապա՝ հեղուկ կաթը, ինչ որ կ'օգնէ որ խմորը ըլլայ կակուղ եւ փափուկ:
- Երբ կարկանդակները փուռն են հանենք, երկու վայրկեան զանոնք անձեռոցով կամ մաքուր կտորով մը ծածկենք, որպէսզի անոնք փափուկ մնան:
- Կարկանդակները փափուկ պահելու համար, փուռն են հանելէն ետք քիչ մը հալած կարագ քսենք անոնց վրայ:



## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Ասիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն երկրորդ հանդիպումին, Սուրիոյ հաւաքականը 1 - 0 արդիւնքով պարտութեան մատուցեցաւ Աւստրալիոյ կազմէն: Մրցումին, Սուրիոյ հաւաքականը վստահեցաւ պաշտպանողական ոճի խաղարկութեան եւ կրցաւ հեռացնել դարպասին ուղղուած բոլոր վտանգները: Երկրորդ կիսախաղին կազմը դիմաւորեց իր միակ կողմը:



- Սուրիոյ պասքէթի աղջկանց U-18-ի, Բ. փուլի մրցումներուն, ՅՄԸՄ-ի աղջիկները Դամասկոսի մէջ 72 - 41 արդիւնքով պարտութեան մատուցին հիւրընկալ Մուհաֆազան: Չոյգ կազմերուն միջեւ դարձի հանդիպումը տեղի պիտի ունենայ Շաբաթ օր ժամը 3:00-ին, ՅՄԸՄ-ի դաշտէն ներս:

- Սուրիոյ պասքէթի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, ՅՄԸՄ-ի տղոց կազմը 86 - 64 արդիւնքով յաղթանակ մը եւս արձանագրելով պարտութեան մատուցեց Յամայէն ժամանած Թալիսան, իսկ ՅԵԸ-ի տղաքը առաջին յաղթանակը արձանագրելով պարտութեան մատուցին Յըթթինը՝ 64 - 62 արդիւնքով: Աւելցնենք, որ առաջին փուլի վերջին մրցումին ՅՄԸՄ-ի մրցակիցը պիտի դառնայ ՅԵԸ-ը: Հանդիպումը տեղի պիտի ունենայ Կիրակի կէսօրէ ետք, Ճալաա մարզադաշտին վրայ:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ԱՐԺԱՆԱՅԱԲ ԱՐԻՍԱԿԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ

Սպանիոյ առաջնութեան 21-րդ փուլի մրցումներուն, Ռեալ Մատրիտը իր դաշտէն ներս հիւրընկալեց Ալմերիան, ուր կիսախաղին 2 - 0 արդիւնքով պարտուելէ ետք կրցաւ հանդիպումը յաղթական աւարտել 3 - 2 արդիւնքով:



Մրցումի առաջին վայրկեանին, հանդիպման հաշիւը բացաւ հիւրերու պէլճիքացի յարձակող Լարջի Ռամազանին, իսկ 43-րդ վայրկեանին Ալմերիոյ առաւելութիւնը կրկնապատկեց սպանացի պաշտպան Էտկար Կոնսալեսը: Ընդմիջումէն ետք, արքայական խումբը կրճատեց տարբերութիւնը՝ 57-րդ վայրկեանին անգլիացի կիսապաշտպան ճուտ Պելիքեմի արդիւնաւետ տուքանային հարուածին շնորհիւ, որմէ տասը վայրկեան ետք, Կիսիսիոս ճունիքը նշանակեց հաւասարութեան կողմը: Աւելցուած 9-րդ վայրկեանին, յաղթանակի կողմի հեղինակ դարձաւ սպանացի պաշտպան Տանիել Կարվախալը, որուն կողային փոխանցումը կատարեց ճուտ Պելիքեմը:

Աւելցնենք, որ Ռեալ 51 կետով գլխաւորեց աղիւսակը, իրեն յաջորդեց ճիրոնան՝ 49 կետով:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 472)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1					■							
2								■		■		
3					■					■		
4		■					■					
5				■								
6		■						■				■
7			■							■		
8								■				
9					■						■	
10	■		■									
11					■		■					
12									■		■	

#### Յորիզոնական

- 1- Հաստատ: Մտերիմ:
- 2- Պատշգամ: 7001:
- 3- Հակառակ՝ բիծ: Կրկին:
- 4- Հնազանդ: Հակառակ՝ դաշտ:
- 5- Հակառակ՝ հաստատական պատասխան: Ժողովրդային սասցուածքը կ'ըսէ. «Անկուշտին աչքը ..... միայն կը կշտացնէ»:


#### Ուղղահայեաց

- 1- Ոչխար: Սարսափ:
- 2- Հակառակ՝ քաջ: Կռակ:
- 3- Անհաշտ, անհամաձայն: Հակառակ՝ տառի մը հարեւանները: Կրկնուած ձայնաւորներ:
- 4- Փոքր շերեփ: Հակառակ՝ ձիու ծածկոց: Իրերայաջորդ տառեր:
- 5- Առաջին կիկը:
- 6- Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Հակառակ՝ աղէկ: Ծառի բունին ստորին մասը:
- 7- Սիւմանթոյի ծննդավայրը: Օղի նօսրագոյն մասը:
- 8- Եական բայ:
- 9- Հայկական մականուններու վերջավանկը: Ըմբռնել:
- 10- Խառնատառ՝ միասին: Պետական գրագիր:
- 11- Քանդող:
- 12- Չոխ: Տաղանդ:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 471)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	յ	տ	ա	մ	ա	ր	ա	լ	ա		ա
2	բ	ի	ն	ի	ն	է	ա	ի	ն			
3	գ	ա	պ	բ	ն	ւ	ն	ա	ր	ա		
4	ա	ր	բ	ւ	ա	փ	ա	կ				
5	ս	փ	ն	է	լ	ի	կ	ա	ն			
6	ի	ի	ա	կ	ա	ա	դ	է	կ			
7	բ	ա	ր	բ	ն	ւ	ն	է	չ			
8					ւ	ն	լ	ա	տ			
9	ա	ն	ա	ր	ա	տ	մ	ա	ր	ի	ա	
10	կ	ր	է	լ	գ	ա	ր	կ	ն			
11	ա	ա		ա	ն	ր	կ	լ	ա			
12	ն	ն	չ	է	լ	վ	ա	ր	է	լ		

ԼՈՒՐԵՐ





## ԱՐՈՐՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵՆ ՆԱՄԱՐ

Ըստ տարիներու սովորության, Կիրակի, 14 Յունուար 2024-ին, Ս. Երրորդություն «Չուարթնոց» եկեղեցւոյ մէջ, Նախագահութեամբ հայ երեք համայնքապետներուն՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայոց Առաջնորդ Արիի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի եւ Սուրիոյ Յայ Աւետարանական Յամայնքի Յամայնքապետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեանի, յատուկ արարողակարգով աղօթք տեղի ունեցաւ ի խնդիր եկեղեցիներու միութեան:



Ժամերգութեան աւարտին իւրաքանչիւր համայնքի ներկայացուցիչ աղերսանք բարձրացուց առ Աստուած եւ հերթաբար իւրաքանչիւր համայնքապետ տուաւ իր պատգամը օրուան բնաբանին շուրջ, իրաւիքելով հաւատացեալ ժողովուրդը եղբայրասիրութեան, որովհետեւ միութիւնը կատարելագործելու միակ միջոցը ՍԵՐՆ Է: Սերը կապն է կատարելութեան: Ան կը նմանի ոսկեայ շրթայի մը, որ իրաշալի ներդաշնակութեամբ կը համախմբէ քրիստոնէայ հասարակութիւնը:

Այս տարուան Միութեան Աղօթքի բնաբանն էր Դուկաս աւետարանիչի գիրքէն քաղուած հետեւեալ համարը. «Միրէ՛քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ զօրութեամբդ ու ամբողջ մտքովդ եւ ընկերդ՝ քու անձիդ պէս» (Դկ 10.27):

Արարողակարգին, Նախ տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որուն ընթացքին հնչեց «Մայր Սուրբ»-ը, ուր Աստուածամօրմ կը խնդրուէր, որ աղաչէ մեզի համար իրմ մարմին առած Աստուծոյ, որպէսզի միաբանէ իր Սուրբ եկեղեցին՝ շինուած հիմերուն վրայ առաքելներուն եւ մարգարէներուն, եւ պահէ անարատ միջեւ օրը երեւման իր գալուստին:

Արարողակարգը վերջ գտաւ ներկաներուն միաբերան աղօթքով, «Յայր Սեր» երգեցողութեամբ եւ համայնքապետներուն օրհնութեամբ:

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՅԱՆ ՆԱՅՐԸ ԱՅՅԵԼԵՅ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՄՕՏԵՆ ՇԵՏԵԿՆԱԿՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Ուրբաթ, 19 Յունուար 2024-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան այցելութիւն տուաւ Ս. Գեորգ եկեղեցի, ուր մօտէն հետեւեցաւ Կալուածոց Յոգաբարձութեան հսկողութեամբ կատարուող վերանորոգութեան աշխատանքներուն:

Սրբազան Յայրը դիմաւորուեցաւ Կալուածոց Յոգաբարձութեան ատենապետ տիար Կարպիս Մարաշլեանի կողմէ, ներկայութեամբ Նպաստից Մարմինի ներկայացուցիչ տիար Յարութ Յայրապետեանի եւ «SALT» բարեսիրական հաստատութեան ներկայացուցիչին:



Սրբազան Յայրը մօտէն հետաքրքրուեցաւ երկրաշարժին հետեւանքով փլուզումի վտանգի ենթարկուած պատին շինութեամբ, որ իրագործուեցաւ «SALT» հաստատութեան նիւթաբարոյական մասնակցութեամբ: Սրբազան Յայրը շրջելով եկեղեցւոյ բաժինները եւ հետեւելով վերանորոգութեան աշխատանքներուն, իր հայրական օրհնութիւնները փոխանցեց, բարձր գնահատեց տարուող աշխատանքը եւ մաղթեց, որ մօտիկ ապագային, Աստուծոյ կամով, վերանորոգութեան աշխատանքները իրենց լրումին հասնին:

## ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԿ ԵՐԳԱՆԿԱՅԻՆՍԱԿ ՍՈՒՐԵՆ Ս. ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ ՆՈՒՅՆԱԿԱՍԵՆ ԴԱՆՏՕՆԸ

Ազգային Զարէն Եփփէ Ճեմարանի Շրջանաւարտից Միութեան Յայաստանի Վարչութեան Նախագծեալութեամբ, Կիրակի, 21 Յունուար 2023-ին, Երեւանի Չօր. Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Բերիոյ Յայոց Թեմի Նորոգ վախճանեալ պաշտօնաւարտ 60-րդ Առաջնորդ Գերշ. Տէր Սուրեն Սրբ. Արք. Գաթարոյեանի հոգեհանգստեան արարողութիւնը:



Արարողութեան ներկայ էին ԶՅ Սուրիոյ Դեսպան Դոկտ. Նորա Արիսեան, «Կամաւորական շարժում» հասարակական կազմակերպութեան Նախագահ Յրանտ Մարգարեան, ԶՅԲ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեան, ազգայիններ, վաստակաւոր միութենականներ եւ վախճանեալ սրբազան հօր յիշատակը յարգող հալէպահայեր:



Արարողութիւնը կատարեցին Մայր աթոռի ներկայացուցիչ հայր սուրբը եւ Բերիոյ Թեմէն Ներս Սուրեն սրբազանին հետ ծառայած՝ Արժ. Տէր Յայկազ Զինյ. Մասոյեան եւ Արժ. Տէր Խորեն Զինյ. Պերթիզեան: Արարողութեան ընթացքին խորհրդաւոր մոմերով աղօթք

բարձրացուեցաւ առ Աստուած՝ սըրբազանին հոգւոյն խաղաղութեան համար:

Ապա ներկաները ուղղուեցան «Մարիլտա» ճաշարան՝ յուշ հաւաքին մասնակցելու:

Շրջ. Միութեան Վարչութեան ատենապետ Ռաֆֆի Աւետիսեան ներկայացուց օրուան շարժանիթն ու յայտագիրը: Այնուհետեւ ցուցադրուեցաւ սրբազան հօր կենսագրութիւնը, ծաւալուն աշխատանքն ու Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանին տաճած անոր սերն ու յարգանքը ներկայացնող տեսերիզ մը, որ պատրաստած էին վարչութեան անդամ ժիրայր Կարապետեան եւ ճեմարանական Գալուստ Գալուստեան:



Սուրեն Արք. Գաթարոյեանը որպէս մարդ եւ առաջնորդ ներկայացուց Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Վարչութեան եւ ԱԸԾ ճեմարանի ինսամակալութեան Նախկին ատենապետ տղթ. Մանուկ Իսկէնտերեան:



Յալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդի Նախկին ատենապետ Կարպիս Վարդանեան ներկայացուց սրբազան հօր արժանիքներն ու գործունէութիւնը:

Ապա արժանապատիւ քահանայ հայրերը իրենց սրտի խօսքը ուղղեցին: Վախճանեալ Սուրեն սրբազանին պայծառ յիշատակը յաւերժացնող հաւաքը վերջ գտաւ «Պահպանիչ» աղօթքով:

Սուրեն սրբազանին անունը, որպէս շինարար՝ ամբողջանուէր առաջնորդ, որոշմունած պիտի մնայ Բերիոյ Յայոց Թեմի եւ ճեմարանի պատմութեան մէջ:

Յիշատակն Արդարոյն Օրհնութեամբ եղիցի:

Ժիրայր Կարապետեան